№ 74 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 6 ԱՊՐԻԼԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 6 ԱՊՐԻԼԻ № 74

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., №5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 228

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

Յայտարարութիւնների համար վճարում են. 1 երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՊՐԻԼԻ 1-Ի ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ռ., 6 և 7 ամսվ. 6 ռ., ամսակ. 1 ռ. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ռ., Թիւրքիա՝ 120 ղրուշ:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցեն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակագրոշմով):

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցեն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակագրոշմով):

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով պատիւ ունի յայտնել, որ վաղը, ապրիլի 7-ին, ս. Նշան եկեղեցում կատարվելու է դպրոցի բարերար հանգուցեալ

Աւետիք ՓԻՐՈՅԵԱՆՑԻ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ.

396. 1—1

Վշտահար Եկատերինա Եգօրօվնա ԲԱՄԻՆԵԱՆԸ իր զաւակներով, Մարիա Պետրօվնա և Աննա Եգօրօվնա ՂՈՆԴԱՂՍԱՁԵԱՆՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր սիրելի որդու, երկրորդները իրանց անժամանակ եղբօր, երրորդը իր թոռան, իսկ չորրորդը իր քրոջորդու՝

ՍԱՂԱՅԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ ապրիլի 3-ին, ցերեկ. ժամը 4-ին: Ամփիոքն այսօր, երեքշաբթի, ապրիլի 6-ին, երեկոյեան ժամը 6½-ին, իսկ յուղարկաւորութիւնը վաղը, չորեքշաբթի, ապրիլի 7-ին, առաւ. ժամը 10-ին, ընակարանից (Մինսկվիցեվսկայա և Եագօնօվսկայա փող. անկիւն, № 28/4) դէպի Կուկիայի ս. Աստուածածնի եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 390. 1—1

Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցու Կրօնապատմական Թանգարանի միայն Յանձնաժողովը յայտնում է հասարակութեան, որ չորեքշաբթի, ապրիլի 7-ին, Վանքի աւագ եկեղեցու գաւթում, պատարագից յետոյ, կատարվելու է

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Աւետիս Բալայեան ՂՈՒԿԱՍԵԱՆԻ

գերեզմանի վրա:

Հոգեհանգստից յետոյ, ժամը 1-ին առաջնորդարանում տեղի կունենայ մրցանակաբաշխութեան հանդէսը: 389. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

Այսօր, երեքշաբթի, ապրիլի 6-ին
ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ
ցօգուտ Գայիանեան օ-իարդաց դպրոցի
պիտի ներկայացնէ

ՏԱՅԻՍ

Դրամա 7 պատկերով, փոխադ. Վ. ք. Տ.-Ղ-նի
Շքեղ դեկօրացիաներով:
Տեղերի գները սովորական են:
Տոմսակները վաճառվում են թատրօնի կասսայում:
Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին
Բեժիսէօր՝ Մ ա ժ ա կ
393. 1—1

Թիֆլիսի Ժողովարան

Այսօր, երեքշաբթի, ապրիլի 6-ին
տեղի կունենայ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Երեկոյթին կը նուագեն երաժշտախումբ և սպանդարներ:
ՊԱՐԵՐ եւրօպական և կովկասեան:
Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են 1 ռուբլի:
(առ.) 395. 1—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

(Զուբալովի անուան)

Դերասանուհի Օ. Մ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆԸ
Բարեհաճ մասնակցութեամբ տ. Աֆրիկեանի, օպերային արտիստ Ն. Դ. ՂՈՒԿԱՍԵԱՆԻ, Զաբէհի և հայ գերասանական խմբի անդամների կը ներկայացնէ

I

ՉԱՐԱԳՈՒԹԱԿ ՔԱՅԼ

Կամ. 3 գործ., հեղ. Կարէեվի, թարգմ. Ալպեանի:

II

ԲԱՐԵԳՈՐԾՈՒՀԻ

Տեսարան 1 գործ. Պերսիանինովի, թարգ. Ոսկանեանի:
Մասնակցում են. տ. տ. Մայսուրեան, Գուլլաեան, Զաբէլ, պ. պ. Ալլահվերդեան, Զաբէհ, Մամիկոնեան, Յարութիւնեան և ուրիշներ:

III

⟵⊕ ՀԱՄԵՐԳ ⊕⟶

Մասնակցութեամբ տ. տ. Աֆրիկեանի, Մայսուրեանի և պ. Ն. Դ. Ղուկասեանի:
Տեղերի գները 2 ռ. 50 կ. մինչև 50 կ.
Սկիզբը ուղիղ ժամը 8-ին:
Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Ալլվանգի մագազինում, Դվօրցովայա փող., իսկ ներկայացման օրը թատրօնի կասսայում:
Բեժիսէօր՝ տ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆ
(Ե. Չ.) (առ.) 392. 2—1

ԱՆԱԹԷՄԱ

Անաթէման՝ խեղճ ու անճար՝
Դուռն էր բաղխում յաւերժի,
Նա հրեշտակին թող «ЗЕФИРЪ» տար,
—10 հ. 6 կ.

Տեսնէր նորից կը մերժի:
Թէկուզ «Казбекъ», «Браво», «Араксъ»
—10 հ. 3 կ.

Կամ «Деликатныя», «Марсъ» և «Другъ»
—10 հ. 5 կ.

Եւ, անպայման, քամուց արագ
Բաց կը լինի դուռը вдругъ.

Եթէ Ռօզան ծանօթ լինէր
Մեր «Восходъ»-ին հոտաւէտ,
—10 հ. 5 կ.

Նա չէր թողնի տունն աւեր
Ինքը փախչի ուրիշի հետ:

Այժմ Լէօնիդ Անդրէեվը
Շատ է ծխում մեր «Прима»-ն,
—25 հ. 30 կ.

Եւ գրելու նրա ձեր
Կը լաւանայ անպայման:

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ „ԵՂԲ. ՍԷՅԼԱՆՈՎ ՆԵՐ“

(Ե. Հ. Կ.) (առ.) 155. 25—25

Adresse Télégraphique ANITAS

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ
Ա. ՌԵԻՏՐԻ
ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

„DIVINIA“—„ԴԻՎԻՆԻԱ“
ԽԻՍՏ ՍԻՐՎԱԾ ԵՒ ՄՕԴԱՅԻՆ ԴՈՒԽԻ
Կաշին փափկացնելու համար՝
ԿԱԼՕԳԵՐՄԱ—ԺԵԼԷ եւ
ԿԱԼՕԳԵՐՄԱ—ՍԱՊՈՆ
Ֆիրմա «ՎՕԼՖ և ՈՐԴԻՔ», Կարլսրուհէում:
382. 1—1

Адресъ Телеграммъ САНИТАСЪ Тифлисъ

առ.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ

(«Ողբերգ-Տարգին» կից)

Այսօր, երեքշաբթի, ապրիլի 6-ին
Երաժշտագէտ Մ. ԵԿՄԱԼԵԱՆԻ յիշատակին ժամվան V-ամեակի առիթով կը կայանայ
Գրական-երաժշտական

ՀԱՆԴԷՍ

Մասնակցութեամբ օպերային նուագախմբի, երգչուհիների, երգիչների և երաժշտասէրների: Երաժշտագէտ ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ կը խօսի ԵԿՄԱԼԵԱՆԻ մասին, որոշելով նրա կոչումը, դերը համաշխարհային երաժշտ. ընտանիքի մէջ:

ՕՊԵՐԱՅԻՆ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԸ, իտալացի երաժշտագէտ Ա. Ա. ՊՐԻՎԷՏԷՐԱՅԻ դեկավարութեամբ կը նուագէ, հայերիս համար բոլորովին նորութիւն, պատարագից կոպիներ: Երգեցիկ խումբը, դեկավարութեամբ երգիչ Մուրադեանի, օպերային նուագախմբի հետ կերգէ «Հայր մեր», «Սուրբ, Սուրբ» և այլն: Երիտասարդ դաշնակահարուհի օր. Մաուլէն Բուդդանեան կը նուագէ Եկմալեանի Nocturne, երիտասարդ երգչուհի Մարիէթ Սոխակեան-Սօլօվեան կերգէ Եկմալեանի յիշատակին ձօնված երգ և այլն:

—

Յիշողութիւններ Եկմալեանի շուրջը և զրոյց Երուանդ ex-վարդապետի «Հայաս. եկեղ. բարեփոխ.» առիթով:

Մուտքը՝ արուեստագէտների, գեղագէտների, գրականագէտների, լրագրողների, ուսուցիչների և նրանց ընտանիքների համար 50 կ., հոգևորականների՝ 1 ռ. և կողմնակի անձանց համար 2 ռ.:

Ցանկացողները պէտք է վաղօրօք ապահովեն իրանց մուտքի տոմսակով, որովհետև տոմսակների թիւը սահմանափակ է:

Սկիզբը երեկոյեան 8¼ ժամին:

Դ ա ն օ թ.—երեքշաբթի օրվանից մուտքը անխիստ ամենքի համար ԵՐԵՔ ՌՈՒԲԼԻ:

Մանրամասն ծրագիրը լոյս է տեսնում «Տարազի» № 3-ում, որ նուիրված է երաժշտագէտ Մ. Եկմալեանի յիշատակին:

Տնօրէն՝ Տ. Նազարեան
(շ. ե.) (առ.) 376. 2—2

ԲԺԻՇԿ

Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
(առաւօտեան ժ. 11—1.
Ընդունելութիւնը (երեկոյեան ժ. 5—7.
Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(Ե. Հ. Կ.) (առ.) 1045. 100—81

ԳՈՆԷ ԱՅԺՄ ՁՈՒՇԱՆԱՑ ԳՈՐԾԸ

Երեք տարի ձգձգումներից յետոյ՝ սկսում է մօտենալ իրագործութեան Էջմիածնի հողերի ոռոգման ծրագիրը էլեքտրական ոյժի գործադրութեամբ:

Դեռ երեք տարի սրանից առաջ պարզ էր բոլորովին, որ մեծ քանակով ջուր վերցնելու համար «Սև-ջուր» կոչված գետակից՝ ամենանպատակայարմարն է գործադրել էլեքտրական ոյժ:

Մենք շատ մօտ ընդունեցինք մեր սրտին այդ խնդիրը և, հետևելով նախնական խորհրդակցութիւնների տուած դրական ցուցումներին, յորդոր կարդացինք կարելիին չափ արագացնելու գեղեցիկ ձեռնարկութեան իրագործութիւնը, լիայոյս լինելով որ իւրաքանչիւր շահած տարին պէտք է վերածացնի Էջմիածնի կալուածական եկամուտների բարձրացումը և աւելացումը:

Էջմիածնի ոռոգման խնդրի առաջ մղելը եղաւ նոյնպէս Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան առաջին գործը: Ընկերութիւնը իր առաջին ընդհանուր ժողովը նուիրեց այդ խնդրի լուսաբանութեանը և, հրաւիրելով գիտակ անձերի գործակցութիւնը, երկու դիտերում պարզեց, որ ոռոգման խնդրի դրական լուծման մասին արդէն բաւականաչափ նիւթեր և ցուցումներ կան գործնական նախագիծ մշակելու համար:

Այնուհետև տեղի ունեցան մասնագէտների և փորձնական մարդկանց կողմից այցելութիւններ այն վայրերին, որոնք պէտք է ոռոգվեն և որտեղից պէտք է վերցվեն ջուրը և էլեքտրական ոյժը:

Միևնոյն ժամանակ սինոդի դիմումի շնորհիւ Էջմիածինը արտօնութիւն ձեռք բերեց վերցնելու Սև-ջրից այնքան ջուր, որ ապահով կերպով կարող է բաւարարութիւն տալ ամենամեծ պահանջներին, որոնց մասին երազել են երբևիցէ Էջմիածնում:

Արդարև, ինչ՞ը չէ կարելի անել վաթսուն բաշ ջրով: Դա մեծ արտօնութիւն է, որը պէտք է թանգ գնահատել:

Բայց մի արտօնութիւն է, որը կարող ենք կորցնել, եթէ չը շտապենք ամրացնել նրան իրական գործով, որովհետև եթէ առաջիկայ տարվայ ընթացքում անկարող լինենք կառուցանել ոռոգման շինութիւնները և ջուր դուրս բերել, այն ժամանակ կը կորցնենք ձեռք բերված արտօնութիւնը, որը կը պահպանի իր ոյժը, եթէ իր շնորհված օրից երկամեայ ժամանակամիջոցում վերածված կը լինի իրական գործի:

Պէտք է ամէն միջոց գործ դնել, որ ներկայ 1910 թուականի ամառվայ և աշնան ամիսներում դրված լինեն բոլոր մեքենաները, կառուցված՝ անհրաժեշտ շինութիւնները, փորված՝ առուները, որպէսզի կարելի լինի 1911 թուին արդէն ստանալ հողից առաջին բերքը:

Էջմիածնի հողերի ոռոգման խնդրի դրական և աջող լուծումը կը լինի լաւագոյն գործերից մէկը, որ արած կը լինի լուլտուրական նախաձեռնութիւնը մեզանում: Եւ բազում գործողների մի խմբի այդ առիթով հանգանակած գումարի գործադրութիւնը կը դառնայ մի հոյակապ օրինակ հանրային նպատակայարմար կուլտուրական ձեռնարկութիւնների իրագործութեան համար:

Միայն թէ այլ ևս չուշանայ և նորից չը ձգձգվի գեղեցիկ շինարար գործը:

Ա. Քալանթար

ՉԻՆԱԿԱՆ ԽԼՐՏՈՒՄՆԵՐ

Խանկօու, 2 ապրիլի

Իրերի դրութիւնը Զանգշում լուրջ է: Նահանգապետի կացարանը քարուքանդ է արված: Բրիտանական հիւպատոսարանը և մաքսատունը դատարկվել են ծառայողներից: Արտասահմանցիները փախել են քաղաքից: Այստեղից ուղարկվեցին երեք մարտանաւեր:

Պէկինից հեռագրում են, որ Զանգշում ապստամբութիւնը բռնկվեց բրինձ արտահանելու պատճառով: Ամբոխը խորտակեց հացի շուկաները, այրեց քրիստոնեաների երեք միսիոնները: Մահացու վիրաւորված նահանգապետը այսօր մեռաւ: Քաղաքը ապստամբների ձեռքումն է: Ուղարկված են չինական զօրքեր: (Հ. Գ.)

—

Սէօյ, 3 ապրիլի

Զանշում տեղի ունեցող անկարգութիւնների պատճառով Խանկօու ուղարկվեց ամերիկական «Կիվլէնդ» մարտանաւը: (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարսէյլ 3 ապրիլի

Քաղաքապետը յայտնեց, որ վերջին օրերի գործադուլների պատճառով խախտված կարգ ու կանոնը ներկայումս վերականգնված է: (Հ. Գ.)

—

Պարիզ, 4 ապրիլի

Լսելով պատգամաւորների զեկուցումը, թէ Միլլերանը համակրանքով վերաբերվեց դէպի մինիմալ աշխատավարձ սահմանելու հարցը, երկաթուղային ծառայողների կոնգրէսը վերջացրեց իր աշխատանքները: Կոնգրէսին մասնակցողները երթ կազմելով մի քանի հազար մարդով անցան Պարիզի գլխաւոր փողոցներով կարմիր դրօշակներով, պահանջելով հինգ ֆրանկանոց աշխատավճար: Ընդհարումներ ոստիկանութեան հետ չեղան: (Հ. Գ.)

—

Պարիզ, 4 ապրիլի

Պօստ-հեռագրական բանւորների կօնգրէսը որոշեց գործադուլ անել մայիսի 1-ին և կազմել պօստ-հեռագրական ծառայողների և բանւորների ֆեդէրացիա: (Հ. Գ.)

—

Բերլին, 2 ապրիլի

Այսօր երեկոյեան ամբողջ Գերմանիայում—բացի Բերլինից և Համբուրգից—կարձակվեն խմբերով շինարարական արդիւնաբերութեան բանւորները: Կառավարութեան չնաքերը բանւորներին հաշտեցնելու իրանց տերերի հետ՝ մինչև այժմ անզօր անցան: Ընտերեւոյթին լօկաուտը մի չը տեսնված չափի է հասնելու: Վաղը պէտք է կանգառնէ շինարարական գործունէութիւնը համարեա ամբողջ Գերմանիայում:

Պարոնների պալատը քննեց պրուսական ընտրողական բարենորոգման օրինագիծը: Պետական կանցլերը, պարզելով կառավարութեան դիրքը լանդտագի վճիռների վերաբերութեամբ, մատնանշեց, որ կառավարութիւնը միանում է նրանց, չը նայած նրանց պակասութիւններին, միայն թէ դրանով առաջն առնէ ընտրողական իրաւունքի բարենորոգման խորտակման: Կանցլերը պատրաստ է համաձայնել նախագծի հետ, որպէսզի վերջինս կարողանայ օրինական ճանաչվել: Վիճաբանութիւնների ժամանակ պարզվեց, որ բոլոր հեռաօրները ժիտում են լանդտագի խմբագրած ձևը: Օրինագիծը յանձնվեց 20 հոգուց բաղկացած մի մասնաժողովի: (Հ. Գ.)

—

Բերլին, 3 ապրիլի

Մինչև երէկ երեկոյեան ժամը 7-ը ստացված տեղեկութիւնների համաձայն, լօկաուտ են կազմել 140,000 շինարար բանւորներ: (Հ. Գ.)

—

Խրիստիանիա, 3 ապրիլի

Հիւսիսային-Նորվեգիայում Ֆինմարկէն նահանգի վրայով անցաւ փոթորիկ: Ծովի վրա շատ նաւակներ խորտակվեցին: Առայժմ տեղեկութիւն կայ 12 նաւատների կորստեան մասին: (Հ. Գ.)

—

Շալոն, 3 ապրիլի

Փոթորիկը կործանեց աէրօպլանները կառուցանելու արհեստանոցների մի մասը: Շինված գործիքներից մի քանիսը ջարդվեցին: Կան մարդկային զոհեր ևս: (Հ. Գ.)

—

Սոֆիա, 4 ապրիլի

Մակեդոնական գաղթականների բարեգործական և կուլտուրական հասատութիւնները բաց երկնքի տակ կազմած միտինգում բողոքեցին Վարնավի միտրոպոլիտին Դիբրի յայտարարը նշանակելու դէմ, որովհետև սերբ եպիսկոպոս նշանակելու մէջ բոլգարաբնակ տեղերում՝ նկատվում է մի տեսակ ցանկութիւն սերբ պրոպագանդիստների կողմից՝ երկպառակում մտցնել ազգաբնակութեան մէջ, և պահանջեցին, որպէսզի բոլգարական կառավարութիւնը թոյլ չը տայ իրագործելու այդ միջոցը: (Հ. Գ.)

—

Վիէննա, 3 ապրիլի

«Ֆրէմդենբլատը» հաղորդում է, որ իտալական աթոռային գործերի մի-

նիսար Սան-Զուլիանոյի և բարձն էրենտալի մինչև մաքերի փոխանակութիւն եղաւ արտաքին քաղաքականութեան միահամուռ և միանման ուղղութեան մասին։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 2 ապրիլի

Պատգամաւորների պալատում ֆինանսների մինիստրը խնդրեց շտապեցնել 182 միլիոնի փոխառութեան օրինագծի ընթերցումը։

Ժամանեց Բուդվէյսը որդու հետ։ Կայսրը ընդունեց նրան երկարատև ունկնդրութեան։ Բուդվէյսն այցելեց կոմս Էրենտալին և իր այցեւորները թողեց կայսերական տան անդամների բնակարաններում։ (Հ. Գ.)

—

Աթէնք, 2 ապրիլի

Յունաց կառավարութիւնը դիմեց Ֆրանսիային խնդրելով ուղարկել մի գեներալ և 4 օֆիցեր՝ զօրքը վերակազմելու համար։ (Հ. Գ.)

—

Լօնդոն, 2 ապրիլի

Համայնքների պալատ։ Լօրդերի պալատի veto-ի իրաւունքի բանաձևերը ընդունվեցին 351 ձայնով ընդդէմ 246-ի։

Ասկվիսը յայտնեց, որ եթէ լօրդերը չընդունեն պալատի որոշումը, այն ժամանակ կառավարութիւնը անմիջապէս կառաջարկէ թագաւորին այնպիսի անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, որպէսզի որոշումը օրէնք դառնայ։ Եթէ այդ չպիտի, կառավարութիւնը հրաժարական կը տայ կամ կարձակէ պարլամենտը։ Կառավարականների ատոռներից լսվում են բացագանչութիւններ։

Այնուհետև պալատը 334 ձայնով ընդդէմ 236-ի մի բանաձև ընդունեց, որով պարլամենտի նստաշրջանը սահմանափակվում է հինգ տարով։ (Հ. Գ.)

—

Սպօկէն (Վաշինգտոնի նահ.), 2 ապրիլի

Խաղաղ-ովկիանոսի գծի գնացքը վագոններից մինի անիւը կորվելու պատճառով ընկաւ խրամատը։ Երեք հոգի ազատվեցին։ Կարծում են, որ շատ տանվածներ մնացել են վագոնների տակ։ (Հ. Գ.)

—

Պէկին, 3 ապրիլի

Սունգարի գետի վրա նաւագնացութիւն հաստատելու մասին կատարվող բանակցութիւնները, որոնք տևեցին երեք ամիս ռուս և չին պատգամաւորների միջև Խարբինում, դժուարութիւնների հանդիպեցին։ Համաձայնութիւն կապվեց եօթն կէտերի վերաբերմամբ, մնացածների շուրջը՝ կողմերի կարծիքները բաժանվեցին։ (Հ. Գ.)

—

Կոպենհագէն, 3 ապրիլի

Այսօր վերջացաւ բէյխստագի սովորական նստաշրջանը։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 4 ապրիլի

Բուդվէյսը երէկ ճաշեց կայսրի մօտ Շերբրունում։ Այսօր նա մեկնեց Ունգարիա, ուր կը մնայ 3 օր։ Ունգարական միջպարլամենտական ընդունելութիւն է պատրաստվում Բուդապեշտում։ (Հ. Գ.)

—

Հելսինգֆորս, 4 ապրիլի

Դատական դեպարտամենտի սենատորներ Բարձրագոյնս նշանակվեցին Լիուկսիալ և Անտենբերգ։

Հիմական օրէնքների յանձնաժողովի սեկցիան ձեռնարկեց քննելու սեյմի պատասխանի նախագիծը համալեռական օրէնքների վերաբերութեամբ։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ, 3 ապրիլի

Պետական պաշտպանութեան և ճանապարհների հաղորդակցութեան մասնաժողովների միացեալ նիստում ընդունվեց այն 76 միլիոնի գումարայատկացումը, որ գրավարկելու է Ամուրեան երկաթուղագիծը շարունակելու համար։

Մարտ ամսվայ ընթացքում Ռուսաստանում պատերազմական դատարանները կայացրել են 999 մահվանիներ։

Վլադիվոստոկից հեռագրում են, որ ամերիկեան մամուլի մի մասը թմբուկ է զարկում, պնդելով թէ Ամերիկայի և Եապոնիայի միջև պատերազմն անխուսափելի է։

Աշակողմեանները բողոք ներկայացրին Գուչկովի գործողութիւնների դէմ, մեղադրելով նրան այն բանում, որ մարտի 31-ի նիստում նա կողմնապահ վերաբերմունք ցոյց տուեց դէպի ձախակողմեանները և ճնշեց աջակողմեաններին, նաև որ չը կանչեցրեց Միլիւկովին։ («Ե.»)

—

Տվէր.—Մօրոզովի գործարանում աշխատանքները կանգ առան, 15000 բանւորներ մնացին անաշխատանք։ («Ե.»)

—

Պետերբուրգ, 2 ապրիլի

Կոնսերվատորիայից արձակվելու են 500 աշակերտներ՝ ուսման վճարը չը տալուն համար։

Ճան. հաղ. մինիստր Բուլիգինի հիւանդութիւնը սուր կերպարանք է ստանում։ («Ե.»)

Խարբին, 2 ապրիլի

Չինական լրագիրները յայտնում են, որ այս տարի Չինաստանում սպասվում է անբերրիութիւն և սով։

Չինաստանի հարաւում խլերան սպառնական կերպարանք է ստացել։ («Ե.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ՇՈՒՐՋԸ

Բերլին, 4 ապրիլի

«Ֆոսիշէ-Ցայտունգը» գտնում է, որ փոխառութեան անգլօ-ռուսական պայմանները երկիւղ են ազդում պարսիկներին, թէ այլազգի ֆինանսական կօնտրօլը կը սկսէ միջամտել Պարսկաստանի բոլոր ներքին գործերին։ Լրագիրն ասում է. «Պարսկաստանը կռիւ է մղում բուբլու և անգլիական ֆունտի դէմ։ Գերմանական մարկի երևալը վախեցնում է Ռուսաստանին և Անգլիային։ Բայց այդ մարկը միշտ էլ պատաւոր ծառայութիւններ է մատուցել։ «Նացիօնալ-Ցայտունգը» Անգլիայի գործադրած միջոցները անպատաւաբեր է գտնում և կարծում է, որ Պարսկաստանը այժմ իրաւունք ունի կօնցէսիա տալ բացի Անգլիայից և Ռուսաստանից երրորդ անձերի։ «Ֆրանկֆիւրտեր Ցայտունգը» գանկանում է, որպէսզի երկաթուղային կօնցէսիաների իրաւունքը ամբողջովին բղխէ Պարսկաստանից։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 2 ապրիլի

Եկաւ անգլիական հաւատարմատար Մարլինգը դեսպան Բարկլային փոխարինելու համար, որ արձակուրդով մեկնում է։

Այսօր Սաթթար և Բաղեր խաները հանդիսաւորապէս ժամանեցին։ (Հ. Գ.)

—

Թէհրան.—Նոր կաբինէտ կազմելու գործը յանձնվեց Սանի-ուդ-Դովլէին։

Ուրբաթ օրը քաղաք մտան Սաթթար և Բաղեր խաները։ Ազգաբնակութիւնը սարքեց հսկայական ընդունելութիւն։ Ազգաբնակութեան բոլոր դասակարգերը, համքարները առանց ազգութեան խարութեան և կանայք դուրս էին եկել ընդ առաջ և քաղաքից քսան վերստաչափ տարածութեան վրա վրաններ էին խփել և յաղթական կամարներ էին շինել։ Զօրքերը կանգնած էին շարքերով։ Պետական խնամակալը ուղարկել էր սեփական կառքը։ («Ե.»)

ԹԻՒՐԲԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 2 ապրիլի

Սուլթանը, առողջանալով, սէլամլըքի գնաց կառքով՝ պալատին մօտ գտնվող մզկիթը։

Պրիշտինում սկսվեց պատերազմական դատարանների գործողութիւնը։ Խուզարկութիւններ են տեղի ունենում շարժման պարագուխների մօտ։ Մի քանիսը նրանցից ձերբակալված են։ (Հ. Գ.)

—

Պրիշտին, 3 ապրիլի

Զօրքերի գալստեամբ տիրեց համեմատական հանգստութիւն։ Ապստամբները այլ ևս չէ կարելի տեսնել իրանց նախկին դիրքերում. ըստ երևոյթին նրանք անցել են Լանէ հովիտի ներսը։ Քաղաքը պատերազմական բանակի է նման. բլուրների վրա նկատելի են հարիւրաւոր վրաններ։ Տեղումս կենտրոնացած են արդէն 18 բատալիոն և 6 թնդանօթներ։ Ուրիշ 11 բատալիոն բանակ է դրել Ֆէրիզովիչում։ Զօրքերը անգործ են։ Վաղը գալու են նոր ութ բատալիոն Շէվքէթ-Տուրդութ փաշայի հրամանատարութեամբ։ Բանակցութիւնները ապրստամբների հետ տարարդիւն են։ Այն ինը հոգին, որոնք ձերբակալվեցին իբրև պարագուխներ, ազատ արձակվեցին։ Թուում է, որ ալբանացիները ետանդով պատրաստութիւններ են տեսնում յետագայ գործողութիւնների համար։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 3 ապրիլի

Պատգամաւորների պալատը ձեռք դարկեց քննելու զինուորական ծառայութեան օրինագիծը։ Առաջարկութիւն է արված կրճատել օրինագծով նախատեսված ծառայութեան երեքամեայ ժամանակը 2 տարով։ Հարցը առիթ տուեց երկարատև վիճաբանութիւնների, որոնց շարունակութիւնը յետաձգվեց։

Շարունակվում է զօրքերի առաքումը Ալբանիա։ Այսօր մեկնեցին երկու բատալիոն երկու թնդանօթով։ (Հ. Գ.)

—

Սոֆիա, 3 ապրիլի

Պոլիս մեկնեցին գեներալ Վելչէվ և մայորներ Մարկով և Տապչիկէդէվ օսմանեան պատգամաւորների հետ սահմանային հարցերի մասին բանակցելու համար։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ 25 ԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԸ

«Մշակի» մէջ տպվեց արդէն, որ Մոսկվայում որոշվել է մօնել մեր համակրելի բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրեանի գրական գործունէութեան 25-ամեայ յոբելեանը և այդ նպատակով կազմված է նոյնիսկ յոբելեանական մասնաժողով։

«Моск. Газета» թերթի մէջ այդ առիթով տպված է հետևեալը.

«Տեղական հայ գաղութը եռանդուն կերպով պատրաստվում է Մոսկվայում 20 տարուց ի վեր ընակվող յայտնի հայ բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրեանի յոբելեանին։ Յոբելեանի համար ընտրված է առանձին մանաժողով, որի կազմի մէջ մտել են տեղական հայ հասարակութեան ակնառուր ներկայացուցիչները։ Տաղանդաւոր բանաստեղծի գրական-հասարակական գործունէութեան 25-ամեայ յոբելեանը—մի տատակոտ ճանապարհ է եղել, լի զրկանքներով և տանջանքներով, որոնց միջից Ալ. Ծատուրեանը յաղթող դուրս եկաւ։

«Յոբելեարի բանաստեղծական երկասիրութիւնները մեծ ժողովրդականութիւն են վայելում ոչ միայն հայկական հասարակութեան մէջ, այլ և ռուսների մէջ՝ ռուս յայտնի բանաստեղծների թարգմանութեան միջոցով։

«Յոբելեանական մասնաժողովը պատրաստում է շքեղ տօնախմբութիւն, որին կը մասնակցեն և ամբողջ հայութեան ներկայացուցիչները։ Այդ նպատակով հրաւէր է ուղարկված բոլոր քաղաքները»։

ՇԱՆԻՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Դասախօսի վերցրած նիւթը հետաքրքրական էր։

Նա վերաբերում էր մի կենսական խնդրի, այն է՝ նոր աղբիւրներ գտնելու բոյսերի և կենդանիների զարգացման համար։

Բոյսերի աճումը պահանջում է որոշ քանակութիւն ազոտային բաղադրութիւնների։

Որտեղից վերցնել նրանց։

Հողի պարարտացման համար մինչև այժմ մեծ դեր է կատարել չիլիական սելիտրը։ Սակայն նրա պաշարը շատ էլ մեծ չէ. հաշիւ կարողանալ մի երեսուն տարի էլ նիւթ մատակարարել գիւղատնտեսութեան։

Պէտք է նոր աղբիւրներ գտնել։

Եւ ահա այդպիսի նոր աղբիւր ճանաչված է այժմ մթնոլորտի ազոտը։

Գիտնականները փորձեր են արել մթնոլորտի ազոտը վերածելու ազոտային բաղադրութիւնների, իսկ տեխնիկները և դրամատէրերը փորձել են շինելու խոշոր գործարաններ ազոտային բաղադրութիւններ ստանալու նպատակով։

Վերջին ձեռնարկութիւնները արդէն տալիս են բաւարար հետևանքներ։

Դասախօսը մանրամասնօրէն պատմեց այն բոլոր փորձերը, որոնք արված են տեխնիկայի մէջ, և յայտնեց, որ ազոտային բաղադրութիւնների նոր պաշարները մեծապէս կը նպաստեն գիւղատնտեսութեան արդիւնքների աւելացման։

Դասախօսութիւնը հետաքրքրական էր և ունկնդիրները գոհ սրտով հեռացան իրանց տները։

Դասախօսութիւնը կարդացվեց Թիֆլիսի Եռաժշտական Ընկերութեան դահլիճում։

Մեծապէս նպաստեց դասախօսութեան հասկանալի և մատչելի լինելուն մոգական լապտերը, որի միջոցով ցոյց էին տրվում ազոտային բաղադրութիւնների պատրաստութեան գործարանները և էլեքտրական մեքենաների պատկերները։ Ա. Ք.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՈՒՐԲՈՒՄ

Մենք յայտնել էինք, որ Հասարակական կլուբում պէտք է շարունակվէր անցեալ անգամվանից սկսած վիճաբանութիւնը Բաեվի «Իբսէն և Տօլստոյ» զեկուցման առիթով։

Զեկուցանողը յիշեցրեց համառօտ կերպով իր զեկուցման էութիւնը։

Նա Իբսէնի մէջ տեսնում է մարանչող, ներգործական կերպով մթնոլորտ մտցնող մի գրող փիլիսոփայի, իսկ Տօլստոյի մէջ նա գնահատելով մեծ գեղարուեստագէտի խոշոր տաղանդը՝ բայց համաձայն չէ նրա «մի հանակաւակիր չարին» սկզբունքին։

Ամենուհետև սկսվեց զրոյցը Ա. Բալանթարի նախագահութեամբ։ Զրոյցը շօշափեց ժամանակակից հետաքրքրութեան մի շարք խնդիրներ։

Երմօլաև իր ճառի մէջ բացատրեց, որ Իբսէնի Բրանդը չը պէտք է նկատվի իբրև հեղինակի հայեացքների արտայայտող և գաղափարախօսը։ Նրա կարծիքով՝ Իբսէնը գտնում է Բրանդի հայեացքները ոչ ամենը դեպքում ընդունելի, ուստի պիէսի միւս գործողների բերանով քննադատում է Բրանդին և ցոյց է տալիս նրա սխալները։

Մեկել բացատրեց, որ սխալ է այն հասկացողութիւնը, թէ հրէաների աստուածը վրէժխնդրութեան աստուած է։ Եթէ կայ նրա մէջ վրէժխնդրութեան մի փոքրիկ մասնիկ, շատ անգամ աւելի են գթութեան և ողորմութեան գծերը։

Ա. Մալխասեան ընդգծեց, որ Իբսէնի պահանջն է մարդկանցից՝ լինել որոշ և ինքնուրոյն, մնալով հաւատարիմ դաւանած համոզմունքներին և սկզբունքներին։

Հ. Յովհաննիսեան ցոյց տուեց Բրանդի դրական և դաղափարական կողմերը, համարելով նրան Իբսէնի սիրելի հերոսներից մէկը։

Վերջում զեկուցանողը վերլուծութեան ենթարկեց Իբսէն հակաճառող պարոնների ատածները և պաշտպանեց իր հանդէս դրած թէզիսները։ Ի մէջի այլոց՝ նա կանգ առաւ Տօլստոյի «Ցարութիւն» վէպի վրա և ցոյց տուեց Տօլստոյի այդ գրուածքի կրթական-հասարակական մեծ նշանակութիւնը։

Նոյն երեկոյ սիրողները ներկայացրին մի վոդվիլ էսպերանտօ լեզուով։ Խաղը աշխոյժ էր։ Ներկայացումը, իբրև մի նորութիւն, հետաքրքրեց հանդիսականներին։ Էսպերանտօ լեզուն բաւական քաղցրահնչիւն է. յիշեցնում է իտալերէնը։

ԲԺՇԿ. ԲԱԲԵԱՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, ապրիլի 4-ին, Խօջիվանքի գերեզմանատանը, պատարագից յետոյ, կատարվեց հոգեհանդիստ և օրհնվեց յուշարձան-մատուռը, որ կառուցվել է ամենքին յայտնի բժշկապետ Եգօր Սերգեեվիչ Բաբեանի գերեզմանի վրա հանդուցեալի այրու ձեռքով։ Հանդիսագիրն էր Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկ. Սաթունեանցը, որ խօսեց մի սրտառուչ դամբանական։ Իր քարոզի մէջ նա ընդգծեց հանգուցեալին իբրև մի հազուագիւտ անձն, հասարակական գործիչ և բարեգործ, որ միշտ սրտաբուղխ կերպով օգնում էր իրան դիմողներին նիւթապէս և խորհուրդներով, չը խնայելով աշխատութիւն, և տարբերութիւն չը դնելով ոչ ոքի մէջ։ «Մանաւանդ,—յայտնեց քարոզիչը,—նա շատ էր օգնում ուսանող սերնդին, որ այնքան անկեղծօրէն սիրում էր նրան, միշտ պէտք է յիշէ նրան և տեսնէ նրա մէջ իր համար լաւագոյն օրինակ»։ Հանդիսականների մէջ կային շատ մայրեր, որոնք անկեղծօրէն լացում էին և ասում թէ՝ բժշկապետ Եգօր Սերգեեվիչ Բաբեանցը եղել է իրանց ընտանիքների համար ոչ միայն բարի բժիշկ, այլ և սիրող հայր։ «Եւ ահա,—կնքեց խօսքը սրբազանը,—ահա ինչու հանգուցեալը վայելում էր ամենքի մօտ խորին յարգանք և սէր դէպ իրան, որովհետև նա ինքն իր ձեռքով կազմեց իր համար անձեռակերտ մահարձան, ուստի և նրա համար իրաւամբ կարելի է ասել՝ «յաւիտենական յիշատակ, ով ազնիւ աշխատաւոր և բարի մարդ»։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Ղալաչա, 1 ապրիլի

Ամսոյս 5-ին Ղազախ քաղաք են հրաւիրված Շիւլուի ազատները՝ I մասի հաշտարար միջնորդ Սրլօվի մօտ, ղալաչեցիներից 1580 դես. 200 սաժ. խլված հողի նադել լինելու մասին. այս երկրորդ և վերջին քննութիւնն է, որից յետոյ հաշտարար միջնորդը իր եզրակացութիւնը պիտի ներկայացնէ նադել լինել չը լինելու մասին։ Հրաւիրեալ բոլոր գիւղերից, նախնական քննութեան ժամանակ, 18 հոգի ծեր վկաներ կանչվեցին, որոնք երդմամբ ապացուցին, որ յիշեալ հողերը միշտ եղել են դալաչեցիների ձեռքին և կազմել են նրանց նադել կոչված հողի մի մասը։ Հանդիսականներ գիւղացիներն անհեռատես, ագէտ, կաշառակեր են լինում, բայց դալաչեցիները՝ պլիսա յիշեալներին՝ եղել են վերին աստիճանի անփոյթ դէպի իրանց այգքան կարեւոր գործը։ Սրանց հողերից միշտ խլել են, իսկ այժմ մի այնպիսի մահացու հարուած են հասցրել, որից կարող է ամբողջ գիւղը վերջանալ։ Մթթէ հանաք է 1580 դես. ամենաընտիր վարելահողերից, արօտատեղիներից, առողջարար ալբիւրներից զրկվել, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ գիւղացին էլ չէ կարող ոչ անտառ մտնել և ոչ մի թիզ նոր հող ձեռք բերել։

Մելքիսեդէկ քահ.

—

Մեղրի, 31 մարտի

Մարտի 20—21-ը տեղացող ձիւնը վերնաց պղտոռու ծառերին։ Զմեռը չոր անցնելու պատճառով խոտը դժուար է բուսնում։ Մեղուները այս տարի լաւ չեն։ Մեղանում էլ որընցաւ կայ։ Շատ փեթակներ թէ փչացել և թէ նուազել են։ Գիւղացու մօտ փող չը կայ։ Կենսական մթերքները չափաւոր գնով են ծախվում։ Անասունների ծինը աղող վերջացաւ։

Եփրեմ Վարդանեան

—

Կալեր (Զանգեզ. գաւ.), 27 մարտի

Այս տարի ամբողջ ձմեռն անցաւ, բայց մեզանում ձիւն հազարեա թէ չը կար։ Սակայն մարտի 22-ից սկսեց շարունակ փոթորկանան ձիւն գալ անընդհատ։ Մար ու ձոր ծածկվեցին ձիւնէ ապիտակ սաւանով երկու և կէս արշին հաստութեամբ, այնպէս որ գիւղացիները չէին կարողանում գնալ իրանց գոմերը՝ անասուններին կերակրելու և հոգալու։ Խեղճ գիւղացու ձեռքը ծոցը մնաց՝ անասունների պաշարը սպառված լինելու պատճառով։

Գիւղացիներից մօտաւորապէս 16 հոգի, որոնք մի քանի օր առաջ գնացել էին զանազան ուտեստի պաշար բերելու, վերադառնալիս սարի վրա ընկնում են բուքի բերան։ Խեղճ գիւղացիները ամբողջ երկու օր իրանց անասուններով այդտեղ քաղցած ու ծարաւ ցրտի մէջ մնալուց յետոյ՝ հազիւ գիւղ են գալիս երրորդ օրը ուրիշների օգնութեամբ, փոթորիկը մեղմանալուց յետոյ։ Բաղցին ու ցրտին չը դիմանալով, սարի վրա սատկում է աղքատ գիւղացի Բաղալ Միրզայեանի ջորին, որը իր տան միակ հարստութիւնն էր կազմում։ Ահա այսպիսի դառն վիճակի մէջ է գտնվում 45 տնից բաղկացած աղքատիկ Կալեր գիւղը։ Ա. Բաբեանց

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 2 ապրիլի

Իբրև հերթական՝ ընդունվում է այն օրինագիծը, որով 102,860 բուբլի է յատկացվում Դրեզդենում կայանալիք առողջապահութեան միջազգային ցուցանդէսին Ռուսաստանի մասնակցութեան համար։

Ապա նախագահ Գուչկովը ասում է. «Մարտի 31-ի երեկոյեան նիստում Դումայի անդամ Միլիւկովը անտեղի յիշատակեց Թագաւոր Կայսրի անունը, որի համար և կարգի հրաւիրվեց։ Միևնոյն ժամանակ Միլիւկովը չափազանց ծանր մեղադրանք նետեց մի քաղաքական կուսակցութեան հասցէին, որ գտնվում է Դումայի պատերի դուրս։ Ունենալով անհատական որոշ հայեացք Դումայի անդամ Միլիւկովի արած մեղադրանքի մասին, ես՝ իբրև նախագահ՝ ինձ իրաւունք չը համարեցի պատասխանել այդ մեղադրանքին, գտնելով որ հիմնական արգումենտներով—և ոչ թէ նախագահական իշխանութեամբ և նակազի յոդուածներով—հարկաւոր է կռիւ մղել բարդած մեղադրանքների դէմ։ Արգումենտների փոխարէն, աջակողմեան ատոռներից լսվեցին աղմուկ, աղաղակ, հայհոյանք։ Ես իմ տեղից անկարող էի լաւ լսել սուռնձին դարձուածքներ, և չը կարողացայ որոշել՝ ումից են դրանք բղխում։ Միայն սահնօգրաֆից ես տեղեկացայ, որ աջակողմեան ատոռներից բարձրացած աղաղակները բոլորովին հանդուրժելի չեն բարձր օրէնսդրական հաստատութիւնների մէջ։ Ընդունելով որ այդ վիրաւորանքները չեն ստանում բացում նրանց արժանապատուութիւնը, որոնց նրանք վերաբերում են (ձայներ ձախից և կենտրոնից—«ճիշտ է»), իսկ ամենից առաջ պակասեցնում են նրանց արժանապատուութիւնը, որոնցից բղխում են, բայց և ընդունելով որ դրանով խախտվում է աշխատանքի կանոնաւոր ընթացքը, ես խնդրում եմ Դումայից այն դէպքերում, երբ ես ստիպված եմ լինում կուել այդորինակ երևոյթների դէմ, օգնել ինձ նրանց վերաբերութեամբ ազդելու ամենախիստ միջոցների գործադրութեամբ (ձայներ կենտրոնում—«ճիշտ է, ճշմարիտ է». ծափեր ձախից)։ Ձեր աջակցութեամբ մենք կարող կը լինենք որոշել աշխատանքի այն պայմանները, որոնցով կարելի է ապահովել մօտաւորապէս գործերի կանոնաւոր, հանգիստ ընթացքը» (ծափ. ձախից և կենտրոնում)։

Պուրիշկեվիչը ըստ օրակարգի յայտնում է, որ «աջակողմեանների ֆրակցիայի ներկայացուցիչները, եկած լինելով այստեղ ստեղծագործական աշխատանքի համար, կարող են միայն ողջունել աշխատանքի կանոնաւոր ընթացքին աջակցելու ամեն մի ցանկութեան։ Դումայի նախագահը սակայն սխալվեց. ես կտրուկ կերպով յայտարարում եմ, որ ռուս ժողովրդի մեծութիւնը, որ անհամեմատ խոշոր միապետական կուսակցութիւն է կազմում Ռուսաստանում, Դումայի պատերի ներսում ունի իր ներկայացուցիչները, և ես անձամբ մեծ պատիւ և բաղդ ունեմ միութեան անդամը լինելու։ Եւ աջակողմեան ֆրակցիայի անդամներից շատերը, եթէ իրապէս միութեան անդամներ էլ չեն, բայց և այնպէս ամբողջովին բաժանում են այն հայեացքները, որ դաւանում է այդ ազնիւ, մաքուր, պատուաւոր, շիտակ կազմակերպութիւնը» (ծափեր աջից)։

Նախագահը մատնանշում է, որ հեռագրը ոչ մի խօսք չասաց ըստ օրակարգի։

Պուրիշկեվիչը շարունակում է. «Ձգտելով պաշտպանել ռուսական ջանքերը՝ վերացնելու Դումայում կատարվող անկարգութիւնները, մենք կարծում ենք, որ այն պիսի հառերի թոյլ չը տալը՝ ինչպէս Միլիւկովի հառն էր, որ թոյլ տուեց իրան վիրաւորել մի ամենախոշոր քաղաքական կուսակցութեան, կարող է լաւագոյն գրականը ծառայել աշխատանքի խաղաղ հանգստանքի համար։ Ի՞նչ կարող ենք մենք Միլիւկովին պատասխանել։ Եթէ չը լիներ 15 նիստերից արձակվելու երկիւղը, այն ժամանակ, երբ քննվելու կը լինի արևմտեան նահանգներում զեմստվօ մտցնելու օրինագիծը, մենք ոչ ապաքէն չենք գործադրի Միլիւկովի վերաբերութեամբ այնպիսի միջոցներ, որոնց նա ամենից աւելի է արժանի։ (Աջակողմեանների բուռն ծափահարութիւնները խեղդում են Պուրիշկեվիչի վերջին խօսքերը)։

Այնուհետև քուէարկութեամբ որոշվում է երեկոյեան նիստ գումարել գնդապահ։ (Հ. Գ.)

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Կիրակի օրը Թիֆլիսի քաղաքային կենտրոնական բուժարանի հաստատման տարեդարձին կատարվեց հոգեհանգիստ ի յիշատակ Ալեքսանդր II Կայսրի։ Հոգեհ-

հանգստին ներկայ էին քաղաքագլուխը, քաղ. վարչութեան անդամները, իրաւասու-թիւնները, բուժարանի ծառայողները և այլն։

◆ Թիֆլիսում վախճանվեց համակրելի գրող և հասարակական գործիչ Տիսօրժեվս-կին։ Հանգուցեալը պատկանում էր ազա-տամիտների բանակի գործողների խմբին և յայտնի էր իբրև ազնիւ մարդ, պարտաճա-նաչ քաղաքացի։ Նրա գրական գործու-նէութեան մէջ պատկառելի տեղ են բռնում բանաստեղծական գրուածքները թէ նում բանաստեղծական գրուածքները թէ ինքնուրոյն և թէ թարգմանական։ Տիսոր-ժեվսկի շնորհիւ կովկասեան մի քանի բանաստեղծների աշխատութիւնները յայտ-նի դարձան ռուս ընթերցող հասարակու-թեան։ Կովկասցիները յարգանքով կը մի-շեն հանգուցեալի անունը, որը կապված է կովկասեան ինտելիգենցիայի հետ։

◆ Հայրապետական անդրանիկ կոնդակի ուշ հրատարակման համար հասարակութեան և մամուլի մէջ ծագած արդարացի տրտունջ-ներին որպէս ի պատասխանի, Գարեգին վ. Յովսէփեանը հրատարակել է մի ընդարձակ բացատրութիւն։ Այդ բացատրութեան գլ-խաւոր նպատակն է ցոյց տալ, որ կոնդակի ուշանալու գլխաւոր պատճառն եղել է ցան-կութիւնը՝ զարդարել կոնդակը հայ նախ-նեաց մանրանկարչական արուեստի և նուրբ ճաշակի գործով։ Մենք չը գիտենք որքան աջողվել է այդ դիտաւորութիւնը, որովհետև ընագիրը անմատչելի է մեզ հա-մար, բայց եթէ դատենք Թիֆլիսի առաջ-նորդարանում ստացված օրինակից, չենք կարող ասել, որ կոնդակի կոպիտ ծաղկա-նկարները ընդունակ լինեն լաւ գաղափար տալու մեր նախնեաց նկարչութեան արուես-տի մասին։

◆ Այս տարվայ ամառվանից կը ձեռ-նարկվի մի երեքյարկանի շէնքի կառուց-ման Գօլովինսկի պրոսպեկտի վրա, պօստա-յին կայանի դէմի վրա, ուր մտադրու-թիւն կայ փոխադրել, առ 1-ն յունվարի 1911 թ., հեռագրատունը և հեռախօսի բա-ժանմունքը։

◆ Կովկասի Փոխարքայի օգնականի կարգադրութեամբ գործադրվում է Երևանի նահանգական ատեանի մարտի 15-ի որո-շումը, որի համաձայն Ալէքսանդրոպոլի պրիստաւի օգնական Վլադիմիր Կօպլաստին-սկին յանձնվում է դատարանին քր. պատժ. 347-րդ յօդուածի մեղադրական կէտով։

◆ Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակա-տարը ապր. 2-ին պաշտօնապէս տեղեկաց-րեց բելգիական անօնիմ ընկերութեան Բրիւսէլի կենտրօնական վարչութեան, որ Թիֆլիսի քաղ. դումայի, լսելով ձայնաւոր Ս. Զ. Միրզոյեվի գործի առիթով կազմված զեկուցումը «Курьеръ» ընկերութիւնը կազ-մելու մասին Թիֆլիսում անօնիմ ընկերու-թեան շահերը պաշտպանելու նպատակով, որոշից խստագոյնս դատապարտել բելգիա-կան անօնիմ ընկերութեան ձայնաւորներից մինին՝ արած իր առաջարկութեան համար, և այդ մասին հաղորդել ինչպէս անօնիմ ընկերութեան կենտրօնական վարչութեան, այնպէս և այն կառավարական հաստատու-թիւններին, որոնք հսկում են Ռուսաստա-նում ակցիօներական ընկերութիւնների գոր-ծողութիւնների վրա։

◆ Կովկասի Փոխարքայի քաղաքացիա-կան մասի օգնականի կարգադրութեամբ, անանաբոյժ Զօլօտարեվը վաղը քաղ. դու-մայի շինութեան մէջ գումարելու է խորհրդ-գակցութիւն քաղ. ինքնավարութեան, Թիֆ-լիսի բօրսայի, անդրկովկասեան երկաթու-ղիների կառավարութեան և ձկնավաճառնե-րի ներկայացուցիչներից՝ ձկան առևտուրը կարգաւորելու և ձուկ փոխադրելու միջոց-ների հարցի համար։

◆ Քաղաքային քիմիական լաբօրատօ-րիայի կառավարիչ Գ. Ալիբեգեան ներկա-յումս զբաղված է Թիֆլիսի հանքային աղ-բիւրների յատկութիւնը հետազօտելու աշ-խատանքներով։ Հետազօտութիւնը կապ ու-նի Թիֆլիսում մօտիկ ապագայում ջերմու-կաքանական կայան հաստատելու հարցի հետ։

◆ Ցինանների մինիստրը հաստատեց Թիֆլիսի քաղ. 3 միլիոնի ըէալիզացիայի պայմանները, իսկ հանքային վարչութիւնը՝ Թիֆլիսի հանքային աղբիւրների պաշտպա-նութիւնը։

◆ Ցիշեցնում ենք, որ այսօր «Աղբիւր-Տարազի» խմբագրատան մէջ Գրական-Գե-ղագիտական Սալօնում տեղի կունենայ հանդուցեալ տաղանդաւոր երաժշտագէտ Մակար Եկմալեանի յիշատակին նուիրված երեկոյթը։

◆ Սմսխ 9-ին Կ. Հ. Բ. Ընկ. դահլի-ճում յօգուտ նոյն ընկերութեան զբաղա-քանի իշխանուհի Ս. Վ. Երկայնաբազուկ-Աղրութեանի նախաձեռնութեամբ կայանա-լու է ընտանեկան երեկոյթ։

◆ Կիրակի օր, ապրիլի 3-ին, Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործ. Ընկերութեան ան-դամների ընդհանուր ժողովը չը կարողացաւ կայանալ անդամների օրինական թիւը չը լինելու պատճառով։

◆ Ապրիլի 3-ին Թիֆլիսի Լարակ. գիմնա-զիայում տեղի ունեցաւ մի գրական-երա-ժշտական ցերեկոյթ ի յիշատակ ռուսաց նշանաւոր գրող Անտոն Չեխովի։ Ցերեկոյթը գրաւել էր բազմաթիւ աշակերտներ և աշա-կերտուհիներ։ Հրաւիրված էին և ծնողները, խմբագրութիւնները և մի քանի պաշտօնա-տար անձինք։ Ներկայ էին նաև Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Բուդոլֆը և նրա օգնական Լօպատինսկին։ Աշակերտներից մինը՝ Ժդանովիչ՝ կարդաց իր սեփական հեղինակութիւն «Լորենի» (Липъ) անունով մի բանաստեղծութիւն, որ ընդունվեց մեծ ծափահարութիւններով։

◆ Մարտ ամսի մէջ ընդամենը նաւթ է ստացվել Բագուի նաւթահորերից 41.287,000 պուդ—անցեալ տարվայ նոյն ժամանակա-միջոցով ստացվածից 270,000 պուդով աւել-ի։ Բացի դրանից Սուրախանում ֆոնտանը խփել է Բէնկենդորֆի նաւթահանքում—1.098,531 պ., եղբ. Միրզոյեվների—381,000 պուդ, Բագուի նաւթ. ընկ.—123,121 պուդ։

◆ Կիրակի օրը կատարվեց ձայնաւոր Ղորղանեանի թաղումը մեծ բազմութեան ներկայութեամբ։ Ցարգողների թուումն էին քաղ. վարչութեան անդամները, դումայի ձայնաւորները և այլն։ Աւաղեան ձիաքար-շի ծառայողներից դրված պսակի վրա մա-կագրված էր՝ «Նախկին տիրոջը»։

◆ Թիֆլիսի Նահանգապետը հաստատեց դումայի ձայնաւորներ Ի. Զաքարարիին և Մ. Սվէշնիկեանին էլեքտրաքարշի վրա հսկող քաղաքային ժամանակավորի անդամ-ների կոչման մէջ։

◆ Կով. Հ. Բ. Ընկ. ընդհ. ժողովը, որ նշանակված էր ապրիլի 13-ին և 14-ին, յետաձգվում է և կայանալու է ամսիս 23-ին, 24-ին և 25-ին։

◆ Ամսիս 7-ին Զուբալովի ծողովրդական Տանը հայ դերասանական խումբը բարեհաճ մասնակցութեամբ տ. Աֆրիկեանի և պ. Ղուկասեանի, որ պիտի երգեն համերգի բաժնում, կը ներկայացնէ յօգուտ դերա-սանուհի տ. Մայսուրեանի «Զարգուշակ քայլ» և «Բարեգործուհի» պիէսները։ Հայ հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրե-լով, սպասում ենք՝ որ անտարբեր չի գտնվի դէպի մեր տաղանդաւոր դերասա-նուհին, որ երկար տարիներ իր գեղեցիկ խաղով զարդարել է հայ բեմը և զարգաց-ել հայի ճաշակը։

◆ Բագուի քաղաքային ինքնավարու-թիւնը մի ընդարձակ զեկուցագիր է պատ-րաստել Բագուում ընդհանուր կրթութիւն մտցնելու մասին։

◆ Մարտի 1-ից մինչև 31-ը Կ. Հ. Բ. Ընկ. ընթերցարանն են յաճախել 573 տղա-մարդիկ, 66 կանայք, 847 աշակերտներ և 287 աշակերտուհիներ. ընդամենը 1773 հոգի։ Այդ ժամանակի ընթացքում բաժանվել են գրվել 47 հոգի։ Գրադարանից գրքեր է բաց թողնված՝ ընթերցարանում կարդալու համար 507 գիրք, իսկ գրադարանի բաժա-նորդներին՝ 745 գիրք։ Գրադարանի բաժա-նորդների ընդհանուր թիւը հասնում է 20-ի։

◆ Այս ամսի վերջերին Թիֆլիսի նա-հանգական դատարանի երկրորդ քրէական բաժանմունքում նշանակված է «Тифл. Л.» թերթի խմբագիր Իվան Խաչատուրովի գործը, որին «Закавказье» օրաթերթի խմբագիր իշխ. Գ. Ամիրաջիբին մեղադրում է ժամուլով զրպարտելու մէջ։

◆ Նոր-Բայազետից մեզ գրում են, որ Նոր-Բայազետցի երգ. Կարապետեաններն իրանց հանգուցեալ մօր յիշատակը յաւեր-ժացնելու համար նուիրել են այդ քաղաքի ծխ. դպրոցին 150 ր.։

◆ Արծեանիկ գիւղից (Ղափանի շրջ.) մեզ գրում են. «Մարտի 23-ին Գիւղգիւմ գիւղացի Անդ. Բաբայանը 10 ր. նուիրեց յօգուտ Արծեանիկի պետ. դպրոցի աղքատ աշակերտների։ Այս նուիրատուութիւնը պի-տի հրաշք համարել, որովհետև չը նայած որ մեր գիւղում ամա 27-դ տարին է, ինչ գոյութիւն ունի պետ. միդասեան դպրոց, բայց ոչ ոք չէ հետաքրքրվել այդ դպրոցի աղքատիկ աշակերտութեան նիւթական վի-ճակով»։

◆ Բօմանօվկիից մեզ տեղեկացնում են, որ սիւնին-մասնիկեան կրօնի ուսուցիչ Ժօլա Խայրէդդին Իբրահիմօվը տեղական հայոց ծխ. դպրոցի աղքատ ասների օգտին նուիրել է 13 ր.։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ապրիլի 2-ին Զուբալովեան ծողովրդա-կան Տան հայկական սեկցիայի գործունէու-թեան տարելիցն էր։ Այդ օրը սեկցիան տուեց հրապարակային համաձայն հաշիւ իր այդ միամեայ գործունէութեան մասին։ Հա-շիւը արդէն տպագրութեան է յանձնված և երևի լոյս կը տեսնի շատ մօտ ապագայում։

Առհասարակ, ինչպէս ամէն մի հասարա-կական գործ, այնպէս և Զուբալովեան ծո-ղովրդական Թատրօնում հայկական ներ-կայացումներ կազմակերպելու գործը ըն-թացել է սկզբում զանգաղ և պակասաւոր, ենթարկվելով որոշ անխուսափելի արգե-լոտիթ հանգամանքների։ Սակայն գործի գլուխ կանգնածների եռանդի և ուսումնա-սիրութեան շնորհիւ, շուտով յաղթահարվեցին յիշեալ արգելքները, և ներկայիս ուրախու-թեամբ պէտք է արձանագրել, որ աջողու-թեամբ է պսակված սեկցիայի և թատերա-սէրների խմբի աշխատանքը և նրանց առա-ջադրած նպատակը։ Ծողովրդական մասսա-ները սիրեցին թատրօնը և թատրօն յաճա-խելու պահանջը այժմ նրանց մէջ միս ու արիւն է դարձել։

Զենք ժխտում—ինչպէս և յիշատակեցինք—որ աջողութեան գրաւական հանդիսացաւ սեկցիայի անխոնջ աշխատանքը և ջանասի-րութիւնը գործին նուիրված բեմիսեօրների զեկավարութեամբ, բայց և հարկաւորու-թիւն է զգացվում ճշմարտութիւնը վերա-կանգնած լինելու համար ընդգծել, որ հան-գուցեալ Զուբալովի հիմնած վսեմ հիմնար-կութեան գոյութեան իրողութիւնը և ընդ-սմին մամուլի մշտական խրախուսանքը սկսնակ գործողների վերաբերութեամբ ու-ժեղ զօրավիգ և էական խթան եղան ժո-ղովրդական ներկայացումների կատարեալ աջողութեան։ Այս կարևոր կէտի մասին սեկցիան, դժբաղդաբար, զանց էր առել անգամ յիշատակել։

Յամենայն դէպս մենք մեր ամբողջ սրտից բեղմնաւոր գործունէութիւն ենք ցանկա-նում այսուհետև ևս Զուբալովեան Ժո-ղովրդական Տան հայկական սեկցիային իր ընդգծած շաւղի մէջ յօգուտ մասսաների կրթութեան—թատրօնի՝ այդ երկրորդ դըպ-րոցի միջոցով։

Առաջանք յիշել, որ տարեդարձի առի-թով խումբը կրկնեց Շելլերի «Սէր և խար-դաւանք» ողբերգութիւնը։ Միջարարին հան-դիսականներին բաժանվեցին թերթիկներ, որոնց մէջ սեկցիան խնդրում է պատաս-խանել՝ 1) Ինչ պիէսներ էք ցանկալի հա-մարում տեսնել ժող. բեմի վրա և 2) ժող. բեմի վրա խաղացված պիէսներից որոնց աւելի հաճախեցիք։

Այս անկէտայի հետևանքի մասին կը յայ-տարարվի առաջիկայում։ Ե.

—

Կիրակի, ապր. 4-ին վրաց ազնուականների թատրօնում աշխարհահռչակ ձեռնածու Բօ-բերտ Լէնց թատրօնասրահը լցված հասա-րակութեանը ցոյց տուեց բազմաթիւ հետա-քրքրաշարժ գործողութիւններ, թողնելով մեծ ապշանք և տպաւորութիւն։ Իր անսահման ճարպիկութեան շնորհիւ նա իր ներկայա-ցումները չէ դարձնում արհեստական, այլ բոլորն էլ բնականին մօտ են և հիմնված են երկար ուսումնասիրութիւնների և փոր-ձերի վրա։

Իր ամուսնուց յետ չէ մնում նրա կին Էլէօնօրա Լէնցը, որ նոյնպէս ցոյց տուեց ճարպիկ ձեռնախաղեր և արժանացաւ բուռն ծափահարութիւնների։

Վերջում Բօբերտի աղջիկը՝ Զինա Լէնց գեղեցիկ կերպով երգեց մի քանի գնչուա-կան երգեր։

—

Վրաց հասարակութեան մէջ իբրև ըն-դունակ երաժշտագէտ յայտնի է Կարգարէ-թէլին, որը ամսիս 3-ին կազմակերպել էր վրաց թատրօնում մի ներկայացում-հա-մերգ։

Ներկայացում-համերգը, որ գրաւել էր մեծ բազմութիւն, անցաւ շատ աջող։

Նպաստաւոր տպաւորութիւն թողեցին Սարաջեվի երգած օպերաների մի քանի կտորները և մանաւանդ վրացերէն օպերա-յի մի կտորը, որը հեղինակուհին է ե-բաժշտագէտ Արազիշվիլին։

Իտալացի երգիչ Բրօջին երգեց մի քա-նի իտալերէն երգեր և վարձատրվեց բուռն ծափերով։

Մանկահասակ ջութակահարներ եղբ. Պալցէվները՝ առաջինը ջութակի, իսկ երկ-րորդը թաւ-ջութակի վրա նուագեցին մի քանի կտորներ։

Վերջում Կարգարէթէլիի ղեկավարու-թեամբ կանանց խումբը երգեց մի քանի ժողովրդական երգեր, որոնց ներդաշնա-կութիւնը պատկանում է Կարգարէթէլիին։

Երգերը աւտրժալուը ու ներդաշնակայից են. և չը նայած որ խումբը թոյլ կերպով կատարեց այդ երգերը, այնուամենայնիւ ընդհանուր տպաւորութիւնը աջող էր։ Ց. Գ.

—

Նուխի, 30 մարտի

Մարտի 28-ին ծխ. դպրոցների դահլի-ճում դերասան Շահէնը, մասնակցութեամբ դերասան Մօսեանի և սիրողների, հրաժեշտի ներկայացում տուեց, որը շնորհիւ այն հանգամանքի, որ տոմսերը ցրել էին, բա-ւական մեծ հասարակութիւն էր գրաւել։

Ներկայացրին «Կրեչինսկիի հարսանիքը», կօմէդիա երեք գործողութեամբ։ Ընդհա-նուր առմամբ խաղն անցաւ աշխոյժ. դե-րակատարները բարեխղճաբար էին վերա-բերվել իրանց ստանձնած դերերին և վար-ձատրվեցին ծափահարութեամբ։

Կարգապահութիւնը, շնորհիւ ձեռք առ-նված միջոցների, օրինակելի էր։ Էշիբէգ

ՄԱՄՈՒԼ

Օսմանեան թիւրքերը և առհասարակ մու-սուլմանները Մահմէդ մարգարէի ծննդեան օրը, որ կոչվում է Մեվլուտ, պաշտօնապէս չեն տօնում, այլ այդ օրը կատարում են միայն մզկիթներում կրօնական արարողու-թիւններ և ապա դարձեալ զբաղվում իրանց գործերով։

Նորերս օսմանեան պարլամենտի կամ մեբուսական ժողովի նախագահ Ահմէդ Բի-զայի նախաձեռնութեամբ պարլամենտը ո-րոշեց Մեվլուտի տօնը պաշտօնական հան-դատեան տօն դարձնել ամբողջ Թիւրքիայի մէջ։ Այդ առիթով «Հայրենիք» թերթը գը-րում է.

Իբրև կրոնական թոյլատրու-թեան, մենք բան մը պէտք չէ ըսենք նկատմամբ այս նորութեան։ Շատ մը քրիստոնեայ տօներու պատճառաւ երկրին պաշտօնական և առևտրական կեանքը միջոց մը դադար կառնէ. շատ բնական է, որ փոխադարձն ալ տեղի ունենայ ի նպաստ մահմեդականներուն։ Բայց դի-տելին այն է միայն, որ Հակը փաշան պէտք զգայ, այսպիսի կրօնական նորու-թեամբ մը, ապացոյցը տալու, թէ այն դահլիճն, որում գլուխը ինքը կուգար կանգնէր, շատ ճշմարիտ ժամմեդական-ներու դահլիճ մըն էր։ Առանց անցեալ տարուան դէպքերուն, որոնց մէջ անօ-թիտի և փառասէրներ մահմեդական ամ-բոխին կրօնամոլութիւնը շահագործե-ցին, մինիստր մը պիտի չմտածէր մար-գարէին ծննդեանը բայրամի օրուան պէս տօնել տալ բոլոր Թիւրքիոյ մէջ, դարերէ ի վեր ընդունուած կրօնական պարզ սո-վորութեան մը վրայ նշմարելի բան մը ես աւելցնելով։

Ապա թերթը, համեմատելով օսմանեան «Իթթիհատ-Թէրաքքը» (Մ. և Ց.) կուսակ-ցութեան և մեր հայկական կուսակցու-թիւնների բռնած դիրքը, կցում է.

Մտքէ չէք անցներ անշուշտ որ մեր հայ կուսակցութիւններէն մէկ մէկը կուսակցական պաշտօնագրով օր մը ելլէ եկեղեցին հրաւիրէ իր անդամները Ծնունդին կամ Զատկին ասելու։ «Մենք,—պիտի ըսէին հայ ժողովրդները, — կրօնական միաբանութիւն մը չենք, և մեր ընկե-րակցական գործունէութիւնն այսպիսի կրօնական ծէսերու կատարման մէջ չէ որ երևան գալու կոչուած է»։

Բազդատելով հայ կուսակցականին և թիւրք կուսակցականին երկու կացու-թիւնն ու դիրքը իրարու հետ, պիտի տեսնենք, թէ Իթթիհատ-Թէրաքքի ուղ-ղութիւնն ինչ է։ Անիկա կրօնը իր քա-ղաքական ծրագրէն դուրս չէ ձգած, չէր ալ կրնար ձգել, որովհետև գերիշխող տարրը, իրեն համար, մահմեդականը միայն պիտի ըլլայ։ Եւ եթէ չենք զար-մանար, որ ոչ հնչակեաններն ու ոչ ալ դաշ-նակցականները երբէք մտքէ չեն անցը-ներ կուսակցականօրէն Ծնունդը կամ Զատիկը տօնել, նոյնպէս չենք զարմա-նար, որ Իթթիհատ-Թէրաքքը կը տօնէ մարգարէին ծննդեան կուսակցութեան ա-նունով։ Անօգուտ չէր որ այս կէտն այս անգամ ալ շեշտէինք։ Սահմանադրու-թեան հռչակման առաջին յաջտանակու-թիւններուն մէջ մեզմէ շատերը աչքէ վրիպեցուցած էին շատ մը իրողութիւն-ներ, որոնցմէ մէկն ալ ասիկա էր։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 2 ապրիլի

Գայիանեան ուսումնարանի հոգաբարձու-թեան հրաւէրով՝ հայոց դրամատիկական ընկ. դերասանական խումբը, ապրիլի 6-ին, երեքշաբթի գիշերը, Արքունական թատ-րօնում, պիտի ներկայացնէ առաջին անգամ հայերէն լեզուով «Տախս» անունով մի նոր դրամա, որ փոխադրված է նոյնանուն օ-պերայից և խմբագրված Ֆրանսիացի գրող Անատոլ Ֆրանսի վէպից։ Դրաման, օպերա-յի պէս, բաղկացած է եօթը պատկերից։ «Տախս» օպերան այս ձեւու Արքունական թատրօնում դրվել է եօթ թէ ութ անգամ և ամէն անգամ խուռն հանդիսականների առաջ։ Դրամայի ներկայացման ժամանակ հանդէս պիտի գրվեն այն բոլոր դեկօրա-ցիաները, որոնք կազմում էին օպերայի շքեղութիւնը։ այդ կողմից հանդիսականնե-րը դժգոհելու պատճառ չեն ունենալու։ Ի նկատի առնելով միւս կողմից դերակատա-ների փորձառութիւնը, մենք վստահ ենք, որ «Տախս» դրամայի ներկայացումը պէտք է բաւարարութիւն ու գոհացումն տայ հա-սարակութեան պահանջներին։ Մեզ մնում է աւելացնել, որ ներկայացման զուտ արդիւնքը պիտի գնայ Գայիանեան դպրոցի օգտին և որ՝ աչքի առաջ ունենալով այդ դպրոցի կարիքները, որոնց մասին քանիցս գրվել ու յայտարարվել է՝ պէտք է յուսալ, որ Մողնու եկեղեցու ծխականները և Թիֆլի-սի հայ հասարակութիւնը իրանց ներկա-յութեամբ կը նպաստեն դպրոցին։ Տոմսակ-ների արժէքը եւ կամաւոր յաւելումներ, եթէ լինին, խնդրում ենք ուղարկել հոգաբար-ձութեան անդամ բժիշկ Տիգրան Թադէո-սեանին՝ Вельяминовская № 4։

Հոգաբարձութիւն Գայիան. դպրոցի

—

Պատասխան թատերասէր Գ. Փիրումեանին

Թիֆլիս, 3 ապրիլի

«Մշակի» 68-րդ համարում զետեղած ձեր ինձ ուղղված բաց նամակին իբրև պա-տասխան՝ հաղորդում եմ, որ ես իմ կող-մից միջնորդ դատարանի համար ընտրել եմ դատաւորներ՝ Սարգիս Խարագեանին և Ստեփան Գալստեանին։

Թատերասէր՝ Ց. Տէր-Գրիգորեան

—

Սիսիանք, 3 ապրիլի

Յայտնում եմ խորին շնորհակալութիւն պարսկահպատակ Ս. Թումանեանցին, որ, ի յաւիտենական յիշատակ իր վաղամեռ երկու զաւակների, զոհաբերում է 10,000 ր. արժողութեան տուն Աբասթումանի հայ եկեղեցուն, իսկ մինչև տան գնելը՝ պատ-րաստ է ուղարկել տարեկան 600 ր. կառա-վարութեանս միջոցով, երբ կը ստանայ ինձանից անհրաժեշտ հաւաստիացումն իր բարենպատակ ցանկութիւնների։ Յիշատակ-ված գումարը կը յատկացվի քանանչին ամբողջապէս, երբ նա կաւանդէ հայ լեզուի և կրօնի դասեր տեղային դպրոցում և երբ յանձն կառնէ ձրիաբար հոգալու տեղական աղքատիկ ընտանիքները։ Իսկ տան գնման գործը լինելու է փոխ օգտակար հաւանութեամբ ժողովրդի, մեր և բարերարի, որին նախապէս ուղարկվելու է տան յատակագիծը։

Աբասթումանի գաղութը և նրա փառա-ւոր եկեղեցին ցաւդ զրկված են եղել սեփա-կան քահանայից. այժմ նրան մնում է մը-տածել և լուծել քահանայի հարցը։

Փոխանորդ Ախալցխայի վիճակի՝

Սիոն վարդապետ

—

Բաքու, 1 ապրիլի

Բաւականաչափ գործադրված ջանքերից յետոյ հաջող հաղորդացանք աջողեցնել, որ «Սարուխանօվ-Կուրինսկի» ակց. ընկե-րութիւնը ձեռք վերցնի արտաքսմանեան կապիտալիստներից և ժողովրդի մէջ ակ-ցիաներ բաժանելով կառուցանի Եւլախից-Շուշի երկաթուղին և համաբեռ արդէն հա-սել էինք մեր բաղձանքին, բայց ցաւոց ե-բեռում է, որ այժմ գործը ուրիշ կերպա-րանք է ընդունում, այսինքն արտաքսմա-նեան կապիտալիստներին փոխարինում են տեղացիները և հաստատ արդէն բոլոր ակ-ցիաները բաժանել են իրանց մէջ։ Ուստի մենք նորից դնում ենք մեր պահանջը, որ նախ քան կապիտալիստներին—լինեն նը-բանք արտաքսմանեան թէ տեղական՝ դա միեւնոյն է—մասնակից անելը, ակցիաները ցրեն ժողովրդի մէջ և ապա որքան որ կը մնայ՝ բաժանեն իրանք իրանց մէջ և ոչ թէ ընդհակառակը։ Իմ այս կարծիքը, որը արտայայտում եմ այստեղ, ոչ թէ անձնական է, այլ ժողովրդի մի որոշ խմբի, որը սբբ-տագին ցանկութիւն է զգում այդ ակցիա-ներից ձեռք բերել։ Բարեացակամ

ԲԱՑՆԱՄԱԿ

Գարեգին վարդապետ Յովսէփեանին

Զմիւռնիա, 2 մարտի

«Մշակ» լրագրի № 289-ի (1909 թ.) մէջ դեկտ. 25 թւակրով էջմիածնից մի քանի լուրեր կային տպված, ուր ի միջի այլոց հետևեալը կարդացի։ «...Այդ նպատակի համար (կաթողիկոսական կոնդակը գրելու) հրաւիրվել է նկարիչ Պօլտարացկին, որը հմուտ է հայկական և բիւզանդական ա-ռուեստին։ Զարդանկարված և ձեռագրական բոլորագրով գրված կօնդակը...»։

Արդ, ընթերցողը բնականաբար պիտի եզրակացնէ, որ թէ զարդանկարները և թէ բոլորագրով արտագրված ընագիրը Պօլտա-բացկիի կատարած աշխատութիւններն են։ Բայց, հայր Գարեգին, իրողութեանը տե-ղեակ անձինք կարծեմ իրաւունք կը տան ինձ պահանջելու ձեզանից, որ իմ ձրիաբար կատարած աշխատանքը ձրիաբար քաշվել-ված լինելու համար, զարդանկարիչ Պօլտա-բացկիի անուան հետ իբրև կօնդակի աշ-խատակցի՝ կալլիօգրաֆ նուաստիս անունն էլ յիշելու պատրաստականութիւնն ունե-նայիք։ Յոյս ունեմ, որ յանուն ճշմարտու-թեան պիտի վերականգնէք ու վերադարձ-նէք իրաւունքս*)։ Լևոն Երամեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 27 մարտի

Ատրպատականի նախկին թեմական Եղի-շէ ծ. վ. Մուրադեանցի օրով և նրա իսկ յորդորմամբ բացուաբնակ, ծխախոտի գոր-ծարանատէր Գէորգ Միրզաբէկեանը իր վաղամեռիկ դուստր Եղիսաբէթի յիշատա-կին նուիրել է մի արգատիպ մամուլ, որի արդիւնքը պէտք է յատկանար թեմի բազ-մապիսի կարիքներին։ Նուիրատու Գէորգ Միրզաբէկեան 3,300 ռուբլի տուել էր Մու-բադեանցին մամուլի արժէքը տալու և նրա ծախսերը հոգալու համար։ Մինչև այսօր էլ յայտնի չէ, թէ ինչպէս է եղել այդ գումա-րի մատակարարութիւնը, քանի որ այդ մասին որևէ հաշուեթուղթ գոյութիւն չունի. միայն յայտնի է այն, որ մամուլը Թաւրիզ հասնելուց յետոյ՝ դրա անունով մի պարտք կախված մնում էր մինչև անցած տարի։ Թեմիս առաջնորդ Կարապետ եպիսկ. Բա-գու գնալիս դիմում է Միրզաբէկեանին և խնդրում մամուլի մնացորդ պարտքը ծած-կելու համար մի գումար։ Միրզաբէկեան մարդասիրաբար տալիս է 1300 ռուբլի. 500 ր. կանխիկ և 800 ռուբլու ևս իր գործա-րանից ծխախոտներ է ուղարկում Թաւրիզ, որը յանձն է առնում ծախել «Էկոնօմ» ակ-ցիօներական ընկերութեան վարչութիւնը։ Գէորգ Միրզաբէկեան, կամենալով Ատրը-պատականի թեմական պէտքերին մի ուրիշ կերպով ևս օժանդակել, որոշում է Ատրպա-տականում սպասվող Միրզաբէկեան ծխախո-տի մօնոպոլիան յանձնել թեմի առաջնորդա-րանին, որով թեմ. առաջնորդարանը պիտի օգտվէր 14%, հաշուելով նաև գործարանի դիջած 2%-ը։ Շատ հասկանալի է, առաջ-նորդարանը ծխախոտի վաճառման գործը ինքը չէր անելու, այլ յանձնելու էր մի որևէ վաճառատան։ Այդ գործը յանձն է առնում «Էկոնօմ» ընկերութեան վարչու-թիւնը՝ պայմանով, որ 7% տրվի առաջ-նորդարանին 7% ևս վաճառատանը. և այդ իմաստով ակցիօներական ընկերութիւնը պէտք է ցրէր տպագրված յայտարարու-թիւններ ի գիտութիւն ընդհանուր հասա-րակութեան։ Սակայն անցնում են օրեր, և յայտարարութիւնը լոյս չէ տեսնում՝ յետին մարդերով անշուշտ։ Կարապետ սրբազանը քանիցս յիշեցնում է վարչութեան պարտա-կանութիւնը և վերջին անգամ մի նամակ է գրում և յայտնում, որ «զարմանում եմ», թէ ինչու պայմանը չէ գործադրվում և այլն։ Թեմական «զարմանում եմ» բառը վիրաւորանք է պատճառած եղել վարչու-թեան անդամներին, և այդ պատճառով մեր-ժում են գործը ընդունելու։ Հիանալի չէ. իրանք զարմանալի են, և եթէ մէկը զար-մանում է, դա արդէն վիրաւորանք է լի-նում նրբաճաշակ ազանների համար։ Բայց դեռ աւելի զարմանալին կայ։ Վարչութի-ւնը որ ձգձգում էր սրբազանի պահանջը, տակին ուրիշ բան էր թաքնված։ Վարչու-թիւնը գաղտագողի դիմել է Միրզաբէկեան գործարանին և առաջարկել, որ մօնոպոլիան յանձնվի միմիայն «Էկոնօմ» ընկերութեան՝ թէպէտ մի շարք գովասանքներ ընկերու-թեան հասցէին։ Բարեբաղդաբար եղբարք Միրզաբէկեանները, աւելի բարձր գնահա-տելով թեմի ծով կարիքները թաւրիզեցի ազանների, մերժում են տալ ծխախոտի մօնոպոլիան և ցատ առաջնայն թողնում են

*) Երկի էջմիածնից մենք ստացանք Գարեգին վ. Յովսէփեանի բացատրութիւնը՝ Վեհ. Հայրապետի անդ-րանիկ կոնդակի ուշ հրատարակելու մասին։ Այդ բա-ցատրութեան մէջ յիշված է և Լևոն Երամեանի մաս-նակցութիւնը կոնդակի զարդանկարման գործում։ Խմբ.

Թաւրիզի առաջնորդարանին՝ գրաւորապէս յայտնելով թէ «Էկօնոմի» վարչութեան և Ազգ. առաջնորդին։ Երկու օր առաջ թեմական խորհուրդը պայմանաւորվեց մի այլ հայ վաճառականի հետ և գործը յանձնեց նրան յայտնի պայմանով։

Մենք այս փաստը հաղորդեցինք ժամանակին, ցոյց տալու համար թէ ինչ աշխարհահայեացք և վերաբերմունք ունի Թաւրիզեցի հայը իր սեփական ազգային կարիքների նկատմամբ։ Անհուն ցաւերով շրջապատված ենք—առաջնորդարանը խարխուլ, ուսումնարաններն անապահով, գաւառներում կրթական գործը չափազանց անմխիթար. ուստի վրա յոյս պէտք է դնել, որ նպաստ հասցնէ, եթէ այսպէս է մտածում ու գործում մեր առևտրական դասը։ «Էկօնոմ» ընկերութեան վարիչ մարմնի՝ այս գործելակերպը ստուերէ է գցում ընկերութեան վրա։ Հայկազուն

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը մի օրինագիծ ներկայացրեց մինիստրների խորհրդին գիմնազիաների և նախապատրաստական դասարանների մասին։

Երէկ վախճանվեց նկարիչ Վրուբէլը։

Արևարի մինիստրութիւնը կազմակերպում է Ռուսաստանում գոյութիւն ունեցող բոլոր արհեստագիտական կրթական հաստատութիւնների անկէտա։

ՍԷՎԱՍՏՈՊՕԼ։ Եալտայից եկաւ բուխարական էմիրը և երեկոյեան մեկնեց Բուխարա։

ՎԱՐՇԱՎԱ։ Սենատոր Նէյգարդը օր ու գիշերվայ ընթացքում էական վերաստուգութիւն կատարեց քաղաքի և բերդի 60 ինտենդանտական մասակարարական հաստատութիւնների և խանութների մէջ։

ՎԻԼՆԱ։ Դուման որոշեց ձեռնարկել հանրամաշէլի թատրոնի կառուցման, յատկացնելով 150,000 ռուբլի։

ՊՕԼՏԱՎԱ։ Կոնստանտինօգրադ կայարանում հեռագրական ծառայող Սինէբուկովը, մտնելով այն սենեակը, ուր հերթապահը ծրարում էր 2924 ռուբլի, կորզեց ծրարը և, սպառնալով ատրճանակով, փախաւ, թողնելով սեղանի վրա յեղափոխական կազմակերպութեան նամակը։

3 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երկրագործութեան գլխաւոր կառավարչի տեղեկութիւնների համաձայն, առ 1-ն ապրիլի աշնանացանը երկիւղ չէ ազդում։ Կովկասում միանգամայն յուսալի է։

ՄՕՍԿՎԱ։ Եկաւ պրինց Ֆուշիմին կնոջ հետ։

ՍԷՎԱՍՏՈՊՕԼ։ Բուխարական էմիրը հազար ռուբլի նուիրեց այն մզկիթի համար, որ կառուցվում է տեղումս ի յիշատակ Ալէքսանդր Ա-ի։

ՄԻՐԳՕՐՕԴ։ Սախնօվշինա կայարանում ձերբակալվեց հեռագրական ծառայող Սինէբուկովը, որ կալանաւորման ըօպէին անձնասպան եղաւ։

ՎԱՐՇԱՎԱ։ Սենատոր Նէյդգարդը ձեռնարկեց վերաստուգութիւն կատարելուն պօստ-հեռագրական վիճակի մի քանի հաստատութիւնների մէջ։

ԲՐԷՍՏ-ԼԻՏՕՎՍԿ։ Սենատոր Նէյդգարդի վերաստուգութեան հետ այստեղ խուզարկութիւններ են կատարվում ինտենդանտական պաշտօնեաների բնակարաններում, կնքվում և ստուգվում են պահեստները և մասակարարական խանութները։

ԿԱՄԻՇԻՆ։ Զինուորական դատարանը մի մի քաղաքապահ ոստիկանի սպանութեան մէջ մեղադրվող սոց.-յեղափոխական խմբակից երկուսին դատապարտեց մահվան պատժի, երկուսին տաժանակիր աշխատանքների 8—12 տարով, երկուսին աքսորի, մինին բանտարկութեան. չորս հոգու արդար ճանաչեց։

ԴՐԵԶԴԷՆ։ Դատարանը միջազգային գողոուս նկարիչ Մօգրօվին բազմաթիւ պատկերներ գողանալուն համար դատապարտեց $1^1/_2$ տարով բանտարկութեան։

ՇՏՈՒՏԳԱՐՏ։ Դատարանը երգիծաբանական շաբաթաթերթ «Սիմպլիցիսիմուսի» խմբագրին ենթարկեց երկու ամսով բանտարկութեան՝ եպիսկոպոս Կէպլէրին և հոգևորականութեանը վիրաւորելուն համար։

ՆԻՑՑԱ։ Օդագնացների մրցութեան ժամանակ ռուս Եգիլսօվը թռիչք կատարեց 130,7 (?) կիլօմետր տարածութեան վրա և վերցրեց բոլոր չորս մրցանակները։

4 ապրիլի

ՄՕՍԿՎԱ։ Պրինց և պրինցուհի Ֆուլիմները մեկնեցին արտասահման։

ՎԱՐՇԱՎԱ։ Օդագնաց Գիւսն նոր ժամանակներով փորձ կատարելիս ընկաւ։ Գործիքը ջարդվեց. Գիւսն անվնաս է։

ՁՕՐՕՆԵԺ։ Բոբրովում գիմնազիայի մօտերը մի անյայտ մարդ ատրճանակով մէջքից վիրաւորեց գիմնազիայի տեսուչ Էլինսկին։

ՋԻՏԱ։ Ռուս-չինական բանկի տեղիս բաժանմունքից յափշտակեցին 20,000 կանխիկ դրամ և անյայտ գումարի արժէթղթեր։

ԼՕՆԴՕՆ։ Քաղաքի վրայով անցաւ կայծակ։ Հեղեղը ծածկեց շատ փողոցներ. տեղ-տեղ երթևեկութիւնը դադարեց։ Մի քանի մարդ վնասվեցին։ Կայծակից հրդեհ ծագեց։ Գաւառում փոթորիկը աւերածութիւններ է գործել։

ԿՈՒՐՈՒՆԱ (Շվեդիա)։ Լապլանդիայում ձիւնախառն փոթորիկ է։ Երկաթուղային հաղորդակցութիւնը դժուարութիւնների է հանդիպում։

ՆԻՑՑԱ։ Անկանոն փորձի պատճառով Ֆիլմօվը օդապարիկով ծովը ընկաւ։ Գործիքը վնասվեց, ինքն անվնաս մնաց։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Ընդունում է հիւանդներին՝
Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմենովսկայա փ. № 16.
ՏԷԼԷՖՕՆ № 40.

(Հ. ու. Կ.) 984. 100—75

ԲԺԻՇԿ

Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ

Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կէնիհելսկայա փ., № 6, «Վէսցէլ» հիւրանոցի մօտ։ (Հ. հ. շ.) 955. 100—78

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ և ԻՄԵՐԷԹԻ թեմի Հայոց
ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ
ատենանում այս ապրիլի 9-ին
նշանակված է

ԱՃՈՒՐԴ

և 3 օրից յետոյ ԿՐԿՆԱՃՈՒՐԴ, կապալով տալու վանքապատկան կղզին, որ գտնվում է Վանքի ալագ եկեղեցու դիմաց։ Մասնակցել ցանկացողները պէտք է ներկայանեն որոշված գրաւական։

(Հ. ու.) 388. 2—1

Ապրիլի 3-ին, Միքայէլեան պրօսպէկտով անցնելու ժամանակ

ԿՈՐՍՎԱԾ Է ՄԻ ԾՐԱՐ

որի մէջ եղել են ծննդական, ծաղկի և ուսումնարանի վկայականներ։ Գտնողներին խնդրվում է նեղութիւն կրել յանձնելու արհեստագիտական դպրոցի աշակերտ Խաչատուր Շահինեանին։

391. 1—1

Լոյս տեսաւ ՄԱԿ. ՁՄՇԿԵԱՆԻ

❋ ԳԻՍԱՒՈՐՆԵՐԸ ՏԻԵԶԵՐՔՈՒՄ ❋

(Պատկերազարդ)

Բովանդակութիւն.—Մարսապէլի գիսաւորները։ Գիսաւորներն ի՞նչ են։ Գիսաւորների կազմուածքը։ Գիսաւորների գլուխը։ Գիսաւորների պոչը։ Գիսաւորների տեսքը։ Գիսաւորների թիւը։ Գիսաւորների շրջանագիծը։ Գիսաւորների շարժումն ու սրընթացութիւնը։ Երկրիս ու գիսաւորի իրար հանդիպելը։ Նոր գիսաւորը։ Պարբերական գիսաւորները։ Հալլէյի գիսաւորն ու նրա տեսքը։ Էգմ. Հալլէյի կենսագրութիւնը։

Գինն է 20 կ.։

Պատուէրներն առանց կանխավճարի անկատար են մնում։

Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Զմշկեան։

(Հ. շ.) 387. 8—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԳԵՆՏ

Տեղական եւ օտար խառաֆների լրագիրների ու ամսագիրների համար։

Մ. Ա. ԳԱԺՕՆԻԱ

Ընդունվում են ձեռնտու պայմաններով ամեն տեսակ յայտարարութիւններ՝ ինչպէս տեղական, նոյնպէս եւ օտար քաղաքների լրագիրների ու ամսագիրների համար։ Իմ ծառայութիւնից օգտվել ցանկացողներին խնդրում եմ դիմել այս հասցէով. Тифлисъ, Великокняжеская, № 40.
ՏԷԼԷՖՕՆ № 216.

(Հ.հ.շ) 339. 15—5

ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

Ամառվանից հարկաւոր է

ՄԻ ԲՆԱԿԱՐԱՆ

7 ՍԵՆԵԱԿԻՑ

բաղկացած, II, III և IV քաղաքամասերում։

Սենեակները պէտք է լինեն չոր եւ լոյս. բնակարանը պիտի ունենայ յարմար բակ և ջուր։

Դիմել Յ. Մելիք-Բախտամեանին՝ Пушкинск. № 3, Գ. Վարդանեանին՝ Бебутовск. № 50, Բամոյեան դպրոց։

(26,31,6) 341. 3—3

Ի. Լեալէի լաբօրատօրիայի Օրլեան քաղաքում (Ֆրանսիա)

ԵՕԴԻՐԻՆ ԲԺՇԿԱՊԵՏ ԴԷՇԱՆԻ

(Iodhyrine du d-r Deschamp)

ՇԱՏ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԻՋՈՑ

ՁԱՂԱՆԱԼՈՒ ԴԷՄ

որ խորհուրդ են տալիս բժիշկները, փաստաւոր հեռանկներով։ Բժշկապետ Դէշանի եօդիրինը նշանաւոր միջոց է համարվում չաղութեան դէմ. նրա ազդող ներգործութիւնը նկատվում է հէնց բժշկութեան սկզբում։
Բժշկապետ Դէշանի եօդիրինը բոլորովին անմեղ է օրգանիզմի համար։
Հեռացնում է չաղութիւնը ասոիճանաբար չատ կարճ ժամանակամիջոցում։
Շրկրվիկի գինը, որ պարունակում է 60 դեղհատներ, արժէ 4 ր. 25 կոպ.։
Ծախվում է բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։
Ընդհանուր ներկայացուցչութիւնը Ռուսաստանում
Торговый Домъ ЛЮКСЕНБУРГЪ и К-о, Варшава, Журавья, 40.

(6,16,27,Ժ.7,17) (В. 25331) 370. 5—1

200 ռուբլի պարգեւ ենք տալիս իրաքանչիւրին,

ով մեզ կապացուցէ, որ տարև յիշված առարկաները չեն համապատասխանում իրանց գնին։ ՄԻԱՅՆ 3 ՌՈՒԲ. 95 ԿՈՊԵԿՈՎ, փոխանակ 12 ռուբ., ուղարկում ենք 17 հատ անհրաժեշտ և արժէքաւոր առարկաներ. 1) Մէկ պղպջակով ժամացոյց. «Անկեր» կամ «Ցիլինդր» կան. համար, լարումը առանց բանալիի՝ 40 ժ. մի անդամ, մինչև լրացնելը ուղղված, 6 տար. երաշխաւորութեամբ։ 2) Զը սնացող էլեկտրական լամպայ։ 3) Նոյն տեսակ նոր մոդայի ըրէլօկ։ 4) Այծեմաշկի քսակ ժամաց. պահելու համար։ 5) Պաշեայ չրեղ պօրտմոնէ 6 բաժանմունքներով, մեխանիկ. փականով և կնիքի համար առանձին մասով։ 6) Կաուչուկէ ձիեր պատուիրողի անուն, հօր անուն և ազգանունով։ 7) Մի սրսուկ թանաք կնիքի համար։ 8) ՕԳՏ. ՆՈՐՈՒԹԻՒՆ! Ամերիկ. անվնաս ներծելի «Մուկուտս», որով իւրաքանչիւրը կարող է անվնաս սատիվել։ 9) Զրնիկ։ 10) Նիկելեայ թաս։ 11) Ամերիկ. խոշոր-բացոյց, որով բնականօրէն ցոյց են տրվում գանազան տեսարաններ։ 12—17) 6 հատ հեռաբրդ. պատկերներ։ Բոլոր այդ առարկաները, բարձր յատկ., ուղարկում ենք մէջն 3 ր. 95 կոպէկով, վերադիր վճ. և առանց կանխավճ.։ Վերոյիշեալ գարնիտուրը փակ ժամացոյցով՝ 1 ր. թանդ։ Փոթեթի և ճանապարհածախքի համար 55 կ.։ Սիրիր՝ 85 կ.։ Հասցէն՝ Торгов. фирмъ А. Ш. КАПЛАНЪ и К-о, Варшава. -31. Թղթակցութիւնները առանձին։

(6, 14, 22) (В·25196) 378. 3—1

ՄԱՅԻՍԻ 1-Ի Ն 1910 թ. տեղի կունենայ III ազնվականական նեղքին փոխառ. խաղատոմսերի վիճակահանութիւն։

Տարած գլխաւոր գումարը 200,000 ռուբլի

Ուղարկելով մեր Բանկային Դրատոնակը 2 ռուբ., իւրաքանչիւրը կարող է մասնակցել Պետական 3-րդ փոխառ. խաղատոմսերի $^1/_{50}$ մասին, որոնք խաղացվելու են մայիսի 1-ին 1910 թ. Պետերբուրգի Պետական Բանկում։ Ծախսելով այդպիսի մի չնչին գումար, իւրաքանչիւրն իր որդու, աղջկայ, եղբօրորդու և ազգական բաղդին կարող է տանել 4000 ռուբլի։ Հետևաբար՝ հարկաւոր է իւրաքանչիւրին փազօրէն օգտվել այդ դէպքից եւ անյապաղ գրվել իբրեւ մասնակցող։ Ստանալով ձեր գրած գումարը՝ խնայ՝ կուղարկվի ձեզ պատշաճ վկայագիր, սեր նշանակված կը լինեն տոմսի համարն ու սէրիան։ Խաղացված տոմսերի ապիսակը կը հրատարակվի թէ «Մշակի» և թէ մայրաքաղաքների ու գաւառական բոլոր լրագիրներում։ Պատուէրներն ու փողը ուղարկէք՝ Въ Банкирскую Контору Г. ТЕШНЕРЪ и Ко. ВАРШАВА, Маршалковская 152.—Վճարը $^1/_{25}$ բաժնի համար 4 ր., $^1/_{20}$-ի համար—5 ր., իսկ $^1/_{10}$-ի համար—10 ռուբ.։

(25, 30, 6, 10, 17, 23) (В. 23317) 325. 6 3

ԿՈՎԿ. I ՄԵՂՈՒԱԲՈՒԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Ա. ԴԻՒՄԱՅԻ

Թիֆլիս, Միխայլովսկի պրոսպ. № 140.

Էլեքտրո-մեխանիկական յատուկ արհեստանոց՝ պատրաստելու համար

ՓԵԹԱԿՆԵՐ, ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՄՈՄԱԹԵՐԹԵՐ ԵՒ ՄԵՂՈՒԱՆՈՑԱՅԻՆ ԱՅԼ ՊԱՏԿԱՆԵԼԻՔՆԵՐ։

ԲՈՒԾԱՐԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԻՍԿԱԿԱՆ ՄԵՂՈՒԱՄԱՅՐԵՐԻ։

Մեղուաբուծութեան վերաբերեալ ԳՐՔԵՐ և ՁԵՌՆԱՐԿՆԵՐ։

Սեփական մեղուանոցի մեղր

Պատկերազարդ պրէյս-կուրանտը ըստ պահանջման ուղարկվում է

ԶՐԻ

394. 5—1

Տղամարդկանց շապիկներ
ՕԶԻՐՆԵՐ ՆՈՐ ՁԵՒԵՐԻ
ՀԱԼՍՏՈՒԽՆԵՐ
Ստացված են մեծ քանակութեամբ
ՊԱՏՐԱՍՏԻ ՍՊԻՏԱԿԵՂԷՆԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ
ԿԻՐՇԲԱՈՒՄԻ եւ ՏԷՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
Գօլովինսկի պրոսպ., տ. Զուբալովի. № 8, Ժողովարանի շարքում։

(Կ.) 337. 10—2

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

խնդրում է այն անձերին, որոնք վճարել են քաղաքային տուրքերը X, XI և XII թաղամասերի ոստիկանատներում՝ №№ 28903, 28905 և 28916 անդորրագրերով, որոնք տրված են հարկահաւաք Թեոդորովի ձեռքով, ներկայացնել յիշեալ անդորրագրերս Քաղաքային Վարչութեան IV բաժնմունքը՝ զբաղմունքի օրերը՝ առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկ. ժամը 2-ը, այդ առիթով ծագած թիւրիմացութիւնները պարզելու համար։

374. 3—2

(Ա. օ.)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ „ԳԵՂՈՒՆԻՆ“

Իր սովորական գիրքով՝ 92 մեծագիր էջերով, զարդարուած բազմագոյն և բազմաթիւ միագոյն պատկերներով։

Խմբագրութիւնը ոչէ ջանք չէ խնայած այնպիսի վիճակի մը մէջ դնել «Գեղունին», որ կարելի բլայ հերոսական ազգերու դիմաց ես հանելու դայն, որ պիտի մնայ իբր կոթող մը երիկեան սրբիկներու վշտին և տառապանքին, և իբրև յուշարձան մը այդ երկրին բազմաթիւ հայ նահատակներուն։

Զանց ընելով յիշատակել բազմաթիւ գեղարուեստական նկարները՝ հարկ է ըսել, որ կարևոր էջեր նուիրուած են կիլիկեան դէպքերու պատկերներուն։

Գրական բաժինը բոլորովին նորութեամբ մը կը ներկայանայ հայ և օտարազգի ընթերցողներու։ Յօդուածներ ունին, բաց ի ներքին աշխատակիցներէ՝ Ամեն. Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. ԻԶՄԻՐԼԵԱՆ, Ազգանայի եպ. Պօղոս Թէրզեան, Դուրեան պատրիարք, Զօպանեան, Օհանեան, Սհարոն, Իսկուհի Մինասեան, Շերվանզադէ, Տիկին Արշակուհի Թէոդիկ, Դանիէլ Վարուժան, Կուրտիկեան, Թ. Եսայեան, Գօքտ. Թորգոմեան, Սէյրի, Թորամանեան, Ռ. Սեակ։ Իսկ օտարազգի գրիչներէ՝ Ֆլամարիոն, Ժիւլ Բուա, Նշանաւոր գրաւոր գիտուհին Սդելրսֆէլդ, Ե. Տեգա Վիկ. Աղանուր, Էնվէր բէյ, Սօֆիա Բուքովիէչքա և այլք։

Ինչպէս արդէն ծանուցուած է՝ «Գեղունի» հասոյթը յատկացուած է Կիլիկիոյ ազգեհատներուն. բսել է գեղարուեստասէր ազգայիններ «Գեղունին» ստանալով՝ պիտի փրկեն նաև որբիկի մը կեանքը։

Տեսնելով որ բարեսէր և գրասէր ազգայիններ փութացին և կը փութան յղել իրենց անունները (բաժանորդագրուելով «Գեղունի») և տեսնելով որ ստացուած օրինակները շուտով պիտի սպառին, այսու կը յայտարարենք թէ «Գեղունին» կարժէ ֆր. 10, —դոլար 2,—ռուբլի 4։

Բաժանորդագրուողք՝ պէտք է փութան իրենց անունը և հասցէն և գինը յղելու խմբագրութեանս, որպէս զի ամեն քաղաք կարենանք փոքրիկ մնուկներով յղել «Գեղունիներ»՝ առանց ֆասուելու բաժանորդաց հասցնելու համար։

Ամեն տեղ, ամեն քաղաք և գիւղ՝ թաղապետութիւնը կամ երիտասարդութիւնը պէտք է աշխատի բարեսիրաց ազգայիններուն լումաները հաւաքելու համար (այսինքն «Գեղունին» ստորագրելու տալու և անոնց անունները խմբագրութեան յղելու, որպէս զի այդ մարմիններուն ուղղենք ապարած «Գեղունիներ»)։

Վստահ ենք, որ բարեսիրտները զոհ պիտի մնան իրենց բրած բարեբարութեան վրայ, երբ իրենց առջև կունենան «Գեղունին». նամանաւանդ երբ իմանան թէ այդ «Գեղունին» հայ կեանք մը փրկած է սովէն։

Դիմել ուղղակի «Մշակի» խմբագրութեան։

Յ. Գ.—Վասն զի ամեն կողմէ գործակալներ և գրավաճառներ դիմումներ կընեն մեզ «Գեղունին» վաճառելու պայմանները ուզելով, կը յայտարարենք թէ 10% միայն կընանք տալ անոնց՝ որոնք կը կանխեն դրամը յղել։

(Հ. ու.) 303. 10—7

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“

գրավաճառանոցում վաճառվում են.

«Վէրք Հայաստանի», Խ. Աբովեանի	— 50 կ.
«Փոթորկից առաջ», վէպ Ա. Տէր-Յովհաննիսեանի	1 ր. —
«Ընդարձակ օրացոյց» սուրբ Փրկչեան ազգային հիւանդանոցի	1 ր. —
«Պոչեան և նրա գրական գործունէութեան արժէքը», Ա. Տէր-Յարութիւնեանի	— 25 կ.
«Մեծն Վարդան», ողբերգութիւն, Տիրացեանի	— 50 կ.
«Արիւնի երգը», ժողովրդական նոր երգեր և տաղեր	— 50 կ.
«Ծիծաղաբեր», ընտիր զուարճախօսութիւններ և անեկդոտներ, Խաչատրեանի	— 20 կ.
«Մեծապատիւ մուրացկաններ և կամիթներ», Պարսնեանի, նոր տպագրութիւն	— 60 կ.
«Պատմութիւն հայ մեծատուններու», 1400—1900, Յ. Մ. բ. տպ.	1 ր. —
«Կիլիկեան արհաւիրքը», պատկերազարդ, Պարթեեանի	— 75 կ.
«Ժամագիրք Հայաստան. սուրբ եկեղեցւոյ»	2 ր. 50 կ.
«Ժողովրդական թատրոն», ժողոված. Ա. Արաքսեանի	1 ր. —
«Ռուսերէն սովորելու դասագիրք», երկու հատոր, Մանդինեանի. պօստի ծախքով	1 ր. 30 կ.
«Քեօրօղլի», արկածներ Քեօրօղլու կեանքից, Աղայեանի	— 15 կ.
«Պատանի», գրական ժողովածու	— 15 կ.
«Նամակագիր», Աղան., զանազան ձեւեր սովորելու համար	— 60 կ.
«Անիի կործանումը», Այվազեանի, պատկերով, 2 մասը միասին	1 ր. —
«Երիտասարդութեան մեղրերը» (սեռական անզօրութիւն տղամարդկանց և կանանց, նկարներով) բժշկ. Համանդի	1 ր. —
«Տղամարդու սեռական կեանքը», Եսայեանի	— 30 կ.
«Զաչաղ Արսէն», դրամա Մօխուբար	— 20 կ.
«Թմբկաբերդի առումը», Յով. Թումանեանի	— 15 կ.
«Վիրաւոր բլբուլ», երգարան	— 45 կ.

Դիմել՝ Тифлисъ. Кн. магазинъ „Гуттенбергъ“, Г. И. Галустяну. Փողի փոխարէն կարելի է ուղարկել մարկաներ։ Գրախանութի գրացուցակները ձրի։

(ու. շ.) 370. 2—2

200,000 ՌՈՒԲ. ԳԼԽԱՒՈՐ ՏԱՐԱԾ ԳՈՒՄԱՐԸ

Մասնակցեցէք Պետական խաղարկու տոմսերի Ազնուական. III փոխառ. տիրաժին, որ տեղի կունենայ առաջիկայ մայիսի 1-ին ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ։ Դուք հնարաւորութիւն ունէք փորձելու ձեր բաղդը՝ առանց խոշոր ծախքերի։ Ուղարկէք շուտով ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՌՈՒԲԼԻ և դուք իրաւունք կը ստանաք մասնակցելու Պետական խաղարկու տոմսերի III փոխառ. տարած գումարի $^1/_{50}$ մասին։ Ծախսված փողը անկորուստ է, հետևաբար ամեն մէկը պէտք է օգտվէ այդ հարմարաւոր ձեռնտու դէպքից։ Ձեր վճարը ստանալուն պէս կուղարկվի ձեզ պատշաճ վկայագիր, որի վրա նշանակված կը լինեն տոմսի և սէրիայի համարները։ Պատուէրները հասցէագրէք՝ КОНТОРЪ Ш. ФРЕНЗЕЛЬ, ВАРШАВА, ПАНСКАЯ 26. Հեռագրի հասցէն՝ ВАРШАВА, ФРЕНЗБАНКЪ.

Վճարը $^1/_{25}$ մասի համար 4 ր., $^1/_{20}$-ինը—5 ր., $^1/_{10}$-ինը—10 ռ.։ Բոլոր խաղացված տոմսերի ապիսակը կը տպվի թէ «Մշակի» և թէ մայրաքաղաքի և գաւառական այլ լրագիրներում։

(1,6,11,16,22) (В.25089) 358. 5—2

ԴԵՂԱՀԱՏՆԵՐ
CASCARA MIDY
Ֆրանսիական ժողովրդական միջոց
ՍՈՎՈՐԱԿԱՆ ՓՈՐԿԱՊՈՒԹԵԱՆ ԴԷՄ։

Ընդունելութեան չափը. 2 ԴԵՂԱՀԱՏ ԵՐԵԿՈՆԵՐԸ, ՊԱՌԿԵԼՈՒՑ ԱՌԱՋ։
Cascara Midy-ն (Կասկարա Միդի) չէ առաջացնում որովայնի մէջ ցաւեր, ոչ էլ հետց և փորլուծութիւն։
Դեղավաճառանոց MIDY, 140, faubourg St. Honoré, Парижъ. Ռուսաստանի գլխաւոր դեղավաճառանոցներում։

(6, 16, 26) (М. 305088) 1050. 0—19

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.